

U-46

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿADEMԻԱՆ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏ

## ԱՂԱՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՎՀԱԴԻՄԻՐԵ

ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ  
XIX-XX ԴԱՐԵՐՈՒՄ (1828-1991)

ԺԷ. 00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցնան ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2007

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСКУССТВ

## АГАСЯН АРАРАТ ВЛАДИМИРОВИЧ

# ПУТИ РАЗВИТИЯ АРМЯНСКОГО ИЗОБРАЗИТЕЛЬНОГО ИСКУССТВА XIX-XX ВЕКОВ (1828-1991)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени доктора  
искусствоведения по специальности 17.00.03 -  
"Изобразительное искусство, декоративное и прикладное  
искусство, дизайн"

ЕРЕВАН - 2007

Приказ 2. Капитану Адмиралтейства Кернелу Кингесу и флоту  
Капитану Адмиралтейства Генрику Гонсалвесу и флоту  
Королевы Елизаветы II  
23.02.2007г.

Ասենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ առմեարածական որևէոր

արվեստագիտության դոկտոր,  
պրոֆեսոր Ն.Ս.Ստեփանյան  
արվեստագիտության դոկտոր,  
պրոֆեսոր Հ.Շ.Դակորյան  
ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ,  
ճարտարապետության դոկտոր,  
պրոֆեսոր Մ.Ս.Դարաթյան

## Առաջատար կազմակերպություն՝

Երևանի գեղարվեստի պետական  
ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2007 թ. մարտի 14-ին, ժամը 14-ին, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 375019, Երևան, Սարշալ Բաղրամյան պողոտա 24գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՅՅ ՕԱՍ արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առարված է 2007 թ. փետրովանի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, առմեստագիրը Բայր Ռենիանը՝

*(Signature)* Ասատրյան Ա.Գ.

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА  
Официальные оппоненты - доктор искусствоведения

доктор искусствоведения,  
профессор Н.С.Степанян  
доктор искусствоведения,  
профессор Г.Р.Акопян  
член-корреспондент НАН РА,  
доктор архитектуры,  
профессор М.М.Асратян

### Ведущая организация -

## Ереванская государственная художественная академия

Защита диссертации состоится 14-го марта 2007 г. в 14 часов на заседании специализированного совета 016 Института искусств НАН РА (адрес: 375019, Ереван, проспект Маршала Баграмяна 24 в).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 12-го февраля 2007 г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат искусствоведения *Н.Н.Борисова*

*Бакеев Г.Г.* Асатрян А.Г.

ԱՏԵՆԱԿԱՍՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅՎԳԻՐԸ

Թենայի արդիականությունը: Ցայսօր չունենք բացառապես XIX-XX դարերի հայ կերպարվեստի պատմությանը նվիրված առանձին հիմնարար ուսումնասիրություն։ Մինչդեռ դրա կարիքը գգում են ոչ միայն ազգային կերպարվեստի պատմությամբ գրավվող մասնագետները, գեղարվեստական բուհերի դասախոսները և ուսանողները, այլև մերօրյա այն նկարիչներն ու քանդակագործները, ովքեր ծգում են ստեղծագործաքար յուրացնել նախորդ սերունդների կուտակած փորձը, շարունակել և զարգացնել ինչպես հին ու միջնադարյան, այնպես էլ նոր և նորագույն ժամանակների հայ կերպարվեստի առավել կենսունակ ավանդույթները։ Ուստի, աշխատությունը ոչ միայն ակադեմիական, զուտ ճանաչողական հետաքրքրություն է ներկայացնում, այլև ծեղում գործնական, առանձին նշանակություն։

Դրանից բացի կարող է լինել պատճենագույն պահպանությունը:

Աշխատության նպատակն ու խնդիրները: Աւելանախոսության գլխավոր նպատակն է ուղյուղ տալ XIX-XX դարերի ընթացքում (1801-28 թ. Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանի ընդգրկվելուց հետո) հայ կերպարվեստի անցած պատմական ուղին, բացահայտել ու բնորոշել նրա գեղարվեստական առանձնահատկությունները և ազգային ուրուկն գները:

Կարևորել ենք հետևյալ խնդիրները.

- XIX դարի և XX դարի առաջնային երկու տասնամյակների արևելահայ և արևմտահայ կերպարվեստի միջև պատճականորեն պայմանավորված ընդհանրություններու ու տարբերությունները,
  - հայ նոր կերպարվեստում առանձին տեսակների ու ժանրերի աստիճանական ծևակորումն ու անհանձաչ զարգացումը,
  - Եվրոպական և ռուսական կերպարվեստի արձագանքները հայ նկարիչների և քանդակագործների ստեղծագործություններում,
  - Խորհրդահայ կերպարվեստի պատմության հիմնական շրջանները,
  - «սոցիալիստական ռեալիզմի» դրսնորումները 1930-50-ական թթ. խորհրդահայ կերպարվեստում,
  - 1960-80-ական թթ. խորհրդահայ կերպարվեստում արտացոլված ավանդական և այլընտրական միտումները,
  - ազգային կերպարվեստը հետխորհրդական շրջանում:

Աշխատության գիտական նորույթը: Տարդ հրապարակի վրա չկա XIX-XX դարերի հայ կերպարվեստի պատմությանը Վերաբերող աճրողական հետազոտություն: Դա բնավ չի նշանակում, թե տվյալ շրջանի հայ կերպարվեստն ուսումնասիրված չէ: Դեռ XIX դարի կեսերից արևելահայ և արևմտահայ մամուլի էջերում, գրական-գեղարվեստական հանդեսներում, առանձին ժողովածուներում հրապարակվել են հայ նկարիչներուն ու քանդակագործներին ներկայացնող, Թիֆլիսում, Կ.Պոլսում, Ուսւաստանուն և արտօսահմանում նրանց մասնակցությամբ տեղի ունեցած ցուցահանդեսները լուսաբանող հոդվածներ, թեև մեծ մասամբ դրանք կրել են ոչ այնքան քննադատական-վերլուծական, որքան հրապարակախոսային՝ լուսավորական-քարոզական կամ կենսագրական-տեղեկատվական բնույթ: Ուշադրության են արժանացել Պ.Աղամյանի, Գ.Բաշինջապահի, Ալ.Շիրվանզարեկի, Կ.Սուրենյանցի, Լ.Մանվեսանի, Ե.Թաթևոսյանի, Ս.Երեմյանի, Ս.Չոպանյանի, Տ.Տայախյանի, Դ.Օքրոյանցի, Յ.Ալյանարի (Ալյանարյան) Զ.Հարուտյանի

Տ.Չյույուրյանի, Կ.Չարյանի և այլոց գրավոր ու բանավոր ելույթները, նրանց ամճճական տպագրություններն ու կարծիքները: 1920-30-ական թվերից, առողեն խորհրդային ժամանակներում, ազգային նոր և նորագույն կերպարվեստի պատճության հիմքերն են դրեւ Գարեգին Լևոնյանը և Ռուբեն Դրամբյանը: Դետաքրքիր են տվյալ ուղղությամբ նկարիչներ Վ.Գայֆենյանի, Մ.Սարյանի, Ռ.Շիշմանյանի, Գ.Գյուրջյանի, քանդակագործներ Մ.Ստեփանյանի և Ա.Սարգսյանի արտահայտած մտքերն ու տեսակետները, շոշափելի արդյունք են տվել արվեստաբաններ Ա.Երեմյանի, Ե.Մարտիկյանի, Մ.Սարգսյանի, Վ.Ջարուրյունյանի, Լ.Խալաթյանի, Մ.Ղազարյանի, Մ.Այվազյանի, Վ.Մարևոյսյանի, Ն.Ստեփանյանի, Յ.Իգիրյանի, Շ.Խաչատրյանի և այլոց ուսումնասիրություններն ու պրատումները: Տրանց հեղինակած՝ առավելապես պատմական ակնարկների կամ «ստեղծագործական դիմանկարների» տեսքով շարողակած կուեկտիվ ու մնագրական աշխատությունները հուսալի հիմք են ծառայել սույն ատենախոսության համար:

Բարձր գնահատելով բնագավառում մեր նախորդների ծեռք բերած ակնառու նվաճումները, մենք միաժամանակ զգտել ենք լրացնել նրանց աշխատանքներում եղած բացերը, հենարավորին ընդարձակել և ամրողացնել ՀՀ-XX դարերի հայ կերպարվեստի համապատեկները, դիտարկել նյութը տարրեր կողմերից, լայն տեսանկյունով, նոր լուսի ներք, գիտական շրջանառության մեջ դնել մինչ այժմ անհայտ, նորացներ ու ստեղծագործություններ, անել փաստական բազում ծշտումներ՝ հենվելով Երևանի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թբիլիսիի պետական և մասնավոր թանգարաններում, պատկերաբաններում, հավաքածուներում, արխիվային ֆոնդերում պահպան արքսետի գործերի, ծեռագրերի ու վավերագրերի, խմբային և անհատական ցուցանունների կատալոգների, հայկական, ռուսական և արտասահմանյան մանուկում, պարբերական այլ հրատարակություններում զետեղված նյութերի, հայ արվեստագետների գրական ժառանգության՝ նրանց ինքնակենսագրությունների, հուշերի, նամակների, տեսական և քննադատական ելույթների, մասնագիտական հանդեսներում, ժողովածուներում, հանրագիտարաններում, կենսագրական բառարաններում տպագրված բազմաթիվ հոդվածների վրա:

Ատենախոսության մեջ առաջին անգամ համեմատական քննության մեջ են դրում XIX դարի կեսերին՝ 1830-60-ական թվականներին, արևելահայ և արևմտահայ կերպարվեստի բնորոշ միտումները, գեղարվեստական համանան ու յուրահատուկ երևույթները: Մասնավորաբար, գուգահեռներ են տարփում Հովհանների և Սանամերի նկարչական տոհմերի միջև: Նոր և կարևոր տեղեկություններ են հաղորդվում Մ.Մելիքովի (Մելիքյանց), Յ.Քարանյանի, Յ.Պատկանյանի, Յ.Ավանյանցի, Յ.Պեղասի, Ա.Սաքայանի, Պ.Մրասյանի, Մ.Մարկոսյանի, Մ.Տիրացոյանի, Ո.Պետրոսյանի, ճ.Արամյանի և այլոց կյանքի ու ստեղծագործության նախն:

XIX դարի վերջին քառորդի և XX դարի առաջին երկու տասնամյակների հայ գեղանկարչության պատմական զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները բացահայտվում, հայ նկարիչների ստեղծագործական նախասիրությունները և անհատական հակումները, նրանց արվեստի թեմատիկ, գաղափարական-կերպարային բովանդակությունը պարզելու համար դիտարկվող նյութը ներարկվում է ոչ միայն ժամանակական, այլև ժամանակագրության մեջ վաղուց կիրառվող ոճաբանական դեմքի արտահայտչական լեզվի, արտաքին ու ներքին կառուցվածքի վրա: Այդ իսկ պատճառով կոնկրետ գործերի վերլուծումներում անդրադարձել ենք նաև արվեստագիտության մեջ վաղուց կիրառվող ոճաբանական, ծևաբանական, կառուցվածքային, պատկերագրական ու պատկերաբանական մեթոդներին:

Բնանկար, կենցաղային պատկեր, պատմանկար, նատյուրմորտ և այլն:

Առանձին գլխով լրաւարանվում է Կայաստանի Արաշին Հանրապետության (1918-20թ.) գեղարվեստական կյանքը՝ այդ տարիներին կերպարվեստի բնագավառում արձանագրված կարևոր իրադարձությունները, նշանակալից երևույթները և հրատապ խնդիրները:

Առավել հանգամանորեն, փաստական ու գեղարվեստական նյութի լայն ընդգրկումով է ներկայացվում խորհրդահայ կերպարվեստը: Ընդ որում, հատուկ խոսվում է ոչ միայն դրա ինքնուրույն խոշոր ճյուղերի ու տեսակմների (գեղանկար, թեմանկար, գրաֆիկա, քանդակ), այլև վերջիններին սպեցիֆիկ՝ մասնաւությունը:

Նորովի են մեկնարանվում և արժեկուլում «սոցիալիստական ռեալիզմին» այսպես թե այնպես ընդիմահարող կամ հակադրվող նկարիչների ու քանդակագործների՝ Ե.Չոչարի, Մ.Փարաջանովի, Ռ.Աղայանի, Յ.Չարճաբյանի (Արտոն), Ե.Գոջաբաշյանի և այլոց, ինչպես նաև 1970-80-ական թթ. հանդես եկած երիտասարդ արվեստագետների գործերում առկա մոդեռնիստական ձգությունը:

Առաջին անգամ մանրանանորեն շարադրվում է 1960-80-ական թթ. խորհրդային դարաշրջանը եղանակով երեք տասնամյակների հայկական քանդակագործության և գրաֆիկայի պատմությունը:

Ընդհանուր գծերով, համառուսակի ներկայացվում ու գնահատվում են Հայաստանի Հանրապետության գեղարվեստական կյանքում (տվյալ դեպքում՝ կերպարվեստի ոլորտում) 1991-ից հետո կատարված արմատական տեղաշարժերը, դրանց դրական ու բացասական հետևանքները, մատնանշվում այսօն գերիշխող հիմնական միտումները:

Աշխատության մերուաբանությունը: Աւելանախոսության հիմքում ընկած է պատմականության (ուսումնական) գիտական սկզբունքը: Նյութը մատուցել ենք ժամանակագրական հաջորդականությամբ՝ հայ պատմագիտության մեջ այսօն ընդունված պարբերացմանը համապատասխան: XIX-XX դարերի ազգային կերպարվեստին առնչող գեղարվեստական երևույթները հանգանանորեն և բազմակողմանի լուսաբանելու նպատակով դրանք, անհրաժեշտ դեպքերում, խմբագրել ու դասակարգել ենք ըստ տեսակների, ծեռերի և ժամաների, այսինքն՝ դիմել վերլուծան կազմարանական (մորֆոլոգիական) մերողին: Հայկական կերպարվեստի ազգային դիմագծերը զատորշելու, տվյալ արվեստագետի ստեղծագործական ուրույն ծեռագրից բացահայտելու համար հարմար ենք գտել համեմատական քննության եղանակը: Ըստ որում, հայ նկարիչների ու քանդակագործների զուգահեռ ստեղծագործությունները զուգադրել ենք ոչ միայն միջյանց, այլև հարևան ժողովուրդների, ուղևու ու ելորդացի վարպետների աշխատանքների հետ: Նոր և նորագույն շրջանների, հատկապես խորհրդահայ կերպարվեստին վերաբերող գուշակները շարադրելիս ծգտել ենք զերծ մնալ գաղափարախոսական կանխակալ կարծիքներից և սոցիոլոգիական ուղղագիծ մոտեցումներից՝ շեշտը դնելով գեղարվեստական երևույթների գաղափարախոսական կառավագարական ու պատկերաբանական գաղափարախոսական դեմքուներին:

Աշխատության գործնական նշանակությունը: Ուսումնասիրության

արդյունքները՝ ընդլայնելով ու խորացնելով XIX-XX դարերի ազգային կերպարվեստի վերաբերյալ առկա պատկերացումները, գիտական և ճանաչողական ինքնուրույն արժեք են ներկայացնում: Դրանք կարող են օգտագործվել հայ կերպարվեստի ընդհանուր պատմությանը նվիրված հիմնարար աշխատություններում, բուհական դասագրքերում ու դասընթացներում, ելակետ դառնալ նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի տարբեր ճյուղերի, տեսակների, ձևերի ու ժամերի առավել մանրախույզ հետազոտության համար: Գիտական շրջանառության մեջ դրվող նորահայտ նյութերն ու տեղեկությունները գործնական օգուտ կարող են բերել պետական և մասնավոր պատկերասրահներին, ինչպես նաև անհատ հավաքողներին՝ անհրաժեշտ գնումներ կամ փոխանակումներ ծեռնարկենիս, ցուցահանդեսներ կամ ցուցադրություններ կազմակերպելիս ավելի հստակ կողմնորոշվելու, մասնակի հարցեր պարզաբանելու և ճշգրտելու տեսակետներից:

Աշխատության փորձաքննությունը: Աստենախոսության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած մի շաբթ գրքերի, մենագրությունների ու գիտական հոդվածների, ինչպես նաև հանրապետական և միջազգային գիտաժողովներում կարդացած գեղուցումների մեջ (տես սեղմագի վերջում բերված աշխատությունների ցանկը), արտացոլվել Երևանի պետական համալսարանում, ինչպես նաև Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում վարած դասընթացներում: Աստենախոսությունը ըննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում:

Աշխատության կառուցվածքը: Աստենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երկու խոշոր բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը տրոհված է առանձին գլուխների, ենթագլուխների ու պարագրաֆների, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատության ծավալը 465 է գլուխների:

#### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի ընտրությունը, հայտարարված են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, նշված են քննարկվող գեղարվեստական երևույթների, արժարժվող հարցերի կարևորությունն ու հրատապությունը, գնահատված է թեմայի գիտական մշակվածության աստիճանը, ներկայացված է դրան ամփոփական վերաբերող մասնագիտական գրականության տեսությունը, շեշտված են աշխատության գիտական նորույթը, գործնական արժեքն ու նշանակությունը, պարզաբանված են կիրառված մեթոդաբանական սկզբունքները, ինչպես նաև դիտարկվող նյութի ժամանակագրական մատուցման պատմական պարբերացման հիմունքները:

#### ԲԱԺԻՆ I

ՍՈՐ ՇՐՋԱԿԻ ԿԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ (1828-1920 թթ.)

Աստենախոսության սույն բաժինը բաղկացած է երեք գլուխներից. ԳԼՈՒԽ Ա. Դայ նոր կերպարվեստի ծևավորումը (1830-60-ական թթ.), ԳԼՈՒԽ Բ. Դայ նոր կերպարվեստի զարգացումը (1870-1918 թթ.) և ԳԼՈՒԽ Գ. Դայաստանի Արածին,

Դամբրապետության (1918-20 թթ.) գեղարվեստական կյանքը: Արածին գլուխն, իր հերթին, տրոհված է երկու ենթագլուխների, որոնք համապատասխանաբար նվիրված են 1830-60-ական թթ. արևելահայ և արևմտահայ կերպարվեստի պատմությանը: Աշխատության երկրորդ գլուխը բաժանված է երեք ենթագլուխների, որոնցում փոխ առ փոխ ներկայացված է 1870-1918 թթ. արևելահայ և արևմտահայ գեղարվարչության, գրաֆիկայի և քանդակագործության պատմությունը: Գեղանկարին վերաբերող հատվածն ունի առանձին պարագրաֆներ, որտեղ խոսվում է տարբեր ժամրերի բնակարի, թեմատիկ պատկերի, դիմանկարի և նատյուրմորտի մասին:

Ուսուաստանին միանալուց հետո Արևելյան Դայաստանում ազգային կերպարվեստն սկսեց զարգանալ նոր աշխարհիկ-հրապարշտական հիմքերի վրա, քիչ թե շատ ձևավորված քաղաքային մշակույթի պայմաններում՝ բավարարելով ոչ միայն եկեղեցու, այլև մասնավոր պատվիրատուի, հասարակության ունենող ու միջին խավերի գեղարվեստական պահանջները: Սակայն ցարական Ուսուաստանի վարած գաղղութատիրական քաղաքականությունը չէր նպաստում Դայկական մարզի (հետագայում Երևանյան նահանգ) մշակութային բարգավաճմանը: Ոչ Երևանը, ոչ Ալեքսանդրապոլը, ոչ Արևելյան Դայաստանի մյուս քաղաքներն այդպես էլ չդարձան մշակութային զարգացած կենտրոններ: Դրան չէր նպաստում նաև Եջմիածնում գահակալած, ազգային մշակութային ու կրթական գործը վերահսկող հոգևորական խորհրդի ծայրաստիճան պահպանողական դիլքորոշումը:

Դամբնախարար արտոնյալ վիճակում էր Թիֆլիսը, որտեղ հայության զգալի մասն էին կազմուն ոչ միայն Դայկական մարզի, այլև Կարինի, Վանի, Տրավոնին, Նոր Չուայի նախկին բնակչները: Այստեղ գործում էին հայկական դպրոցներ, հրատարակվում հայերեն գրքեր, թերթեր, հանդեսներ, կար հայկական քատրոն:

1801-ին Ուսուաստանի կազմում կարաստանի ընդգրկվելուց հետո քաղաքն արագործեն կարուցապատվում է, ստանում եկորոպական դիմագծեր և շուտով դառնում ողջ Ալեքսանդրապոլի ոչ միայն վարչական, այլև մշակութային կենտրոնը: Դասարակական կյանքի աշխուժացմանը զուգահեռ Թիֆլիսում աստիճանաբար ձևավորվում է գեղարվեստական կյանքը: Ենիշ է, մինչև XIX դարի վերջին քաղաքը չուներ գեղարվեստական կրթարաններ, մշտապես գործող պատկերասրահներ, պարբերաբար բացվող ցուցահանդեսներ, սակայն կերպարվեստի հանդեպ ածող հետաքրքրությունը, ժողովրդին գեղարվեստի միջոցով դաստիարակելու անհրաժեշտությունը նկատվել ու գիտակցվել են արդեն 1830-ական թվականներից: Դա հայկական հոլոգել է առաջանա մտավորականներին, այդ բվում՝ մեծ լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր Խաչատրյան Արքովանին: Ժողովրդի գեղարվեստական ճաշակը կրթելու նպատակին են ծառայել Թիֆլիսի հայկական դպրոցների ու ճեմարանների նկարչության, գծագրության գեղագրության ուսուցիչները, որոնք XIX դարի կեսերից փոխարինել են այդ պարտականությունները նախկինում կատարած ուսու և օտարազգի մանկավարժներին:

Այսուհետեւ, մինչև XIX դարի վերջին քառորդը Թիֆլիսում չկար գեղարվեստական ոչ միայն բարձրագույն կամ միջնակարգ, այլև տարրական որևէ դպրոց: Նկարչի կամ քանդակագործի շնորհընված օժտված երիտասարդներին մասնագիտական կրթություն ստանալու, թերթա, միակ

հնարավորությունն ընձեռում էր Պետերության Գեղարվեստից ակադեմիան, որտեղ առաջին հայ ուսանողները հայտնվել են դեռ XVIII դարում: Ազգային նոր կերպարվեստը սկզբնավորվել է 1830-40-ական թթ. Պետերության Գեղարվեստից ակադեմիան ավարտած, այնտեղ ուսանած կամ ակադեմիական խորհրդի կողմից նկարչի կոչման արժանացած Շակոր և Աղարոն Դովնարաբանյաների, Ստեփանոս Ներսիսյանի, Յովհաննես Քաթանյանի և այլոց շանքերով, որոնց մեծ մասը ծնվել, ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում: Ավագ սերնդի այս փոքրաթիվ ջրկատի շնորհիվ պատմական կարծ ժամանականիցոցում վերջնականապես ծևալվորվեց հայ ռեալիստական դիմանկարչությունը, քայլեր արվեցին թեմատիկ պատկերի նշական ուղղությամբ, իսկ Յ.Այվազովսկու արվեստն անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց ազգային բնանկարի ծագման ու առաջնարարացման համար: XIX դարի կեսերին ծնունդ առավ հայկական գրաֆիկան: Կերպարվեստի ճյուղերից պրոֆեսիոնալ հիմքերի վրա չի դրվել միայն քանդակագործությունը:

Նոր շրջանի արևելահայ կերպարվեստի ակունքներում է կանգնած Դովնարաբանյաների նկարչական տոհմի առավել տաղանդավոր ներկայացուցիչ Շակոր Դովնարաբանյանը (1806-1881), որն արդեն մանուկ հասակից յուրացրել է ուշ միջնադարյան հայ նկարչության, Ստեփանների շրջանի պարսկական մանրանկարի և այսպես կոչված «դաշտաների արվեստի» դեկորատիվ լեզուն:

1829-ին Յ.Դովնարաբանյանը Գեղարվեստից ակադեմիա ընդունվելու նպատակով Թիֆլիսից մեկնել է Պետերություն, սակայն գոյություն ունեցող տարիքային ցենզի պատճառով զրկվել մասնագիտական բարձրագործուն կրություն ստանալու հնարավորությունից: Պետագայում այդ նույն հաստատությունը նրան շնորհել է «ոչ դասային նկարչի» կոչում: Յ.Դովնարաբանյանի ստեղծագործական կյանքի մեծ մասն անցել է Թիֆլիսում: Նա գրադիւն է միայն գեղանկարչությամբ՝ աշխատելով բացառապես դիմանկարի ժամանակարի ժամանության ու բնորդներն ին թիֆլիսյան տոհմիկ ազգականության, միջին խավի, բարձրաստիճան ու մանրաստիճան չինովնիկների, հարուստ վաճառականների, ունեսոր արինստավորների: Մոքալաքների, նաև հոգևորականության ներկայացուցիչները և նրանց ընտանիքների անդամները:

Իր ստեղծագործական ուղին Յ.Դովնարաբանյանը սկսել է դեռ 1820-ական թթ., սակայն նրա գեղարվեստական ինքնաստիպ ոճը և ուրուս լեզուն ընդհանուր առմանը մշակվել են 1830-ականներին կատարված աշխատանքներում («Եփրեմ կարողիկոսի դիմանկարը»), «Սստվածատուր Սարգսյանի դիմանկարը», 1834, «Ծուշանիկ Գուրգենիկոսի դիմանկարը» և այլն): Ասպարյուն դրանք կտրուկ փոփոխությունների չեն ենթարկվել, բայց անընդհատ կատարելագործվել, էլ ավելի նրբագեղ ու նրբաճաշակ են դրածել և իրենց ցայտուն դրստրումը գտնել Յ.Դովնարաբանյանի արվեստի ծալիկն շրջանում 1840-50-ական թթ., երբ ստեղծվել են Նատալիա Շեռումյանի, Խաճելի Օրբեյանի, Մելիքյանների, Գրիգոր Քարաջյանի, Սովուս Լիլիպարյանի, Անանյանի, նկարչի կնոջ՝ Սալոմե Դովնարաբանյանի և այլոց դիմանկարները:

Յ.Դովնարաբանյանի աշխատանքներում մարդկա ստվորաբար ներկայանում են մինչև ծննդերը կամ գոտկատեղը՝ երեք քառորդով դեպի մեզ շրջված, սևեռուն հայացքը դիտողին ուղարկած: Նրանց նրբիրան, փխրուն փիգուները հստակ ուրվագծվում են չեզոք գոյներով երանցավորված հենքերի վրա: Կանայք հաճախ են պատկերվում բարկարուի մեջ՝ ձեռքում բաշկինակ կամ համրիչ բրնած, իսկ տղամարդիկ՝ կանգնած վիճակում, արժանապատիվ

կեցվածք ընդունած: Մեծագույն բարեխսդությամբ ու սիրով է նկարիչը վերարտադրում կանանց բավշյա գգեստների գունագեղ, հյութեղ դրվագումները, արժաքաբերով ասեղնագործված նեղ երիգները, ատլասն բարակ, երկար գոտիները, մարգարիտներով կամ գնդասեղներով զարդարված գլխանցները, շղարշե թերե, բափանցիկ քողերն, ինչպես և ուկյա ականջօղերի, մատանիների ու ակնեղենի թանկարժեք փայլ:

Ժամանակակիցները նկարչի գործերը գնահատում էին առաջին հերթին մարդկանց դեմքերը ծիչու հաղորդելու, ատտարեն նամնությունն ապահովելու համար: Բայց նմանության խնդիրը Յ.Դովնարաբանյանի դիմանկարներուն ինքնանապատակ չէր: Նկարչին խորը էր նատուրալիզմի չոր ու պատ լեզուն. նրա լավագույն աշխատանքներն առանձնանում են ուժանտիկական հուզականությամբ, բանաստեղծական տրամադրությամբ, պատկերված մարդկանց դիմագծերի ու հայացքների մեջ տպավորված դեռ նոր արքնացող, դեռ չգիտակցված զգացմունքների ու ապրուների բնականությամբ:

XIX դարի կեսերին Դակոր Դովնարաբանյանի հետ մեկտեղ հանդէս են եկել նաև ստեղծագործական ավելի համեստ կարողությունների տեր դիմանկարիչներ Դարություն Թեմուրյանը, Մինաս Զոհրաբյանը, Եսայի Զանջուղացյանը, Սովուս Մելիքովը (Մելիքյանց, 1818-1898-ից հետո) և ուրիշներ:

Արևելահայ նոր կերպարվեստի զարգացման գործում շշուակելի պավան է մոլուն Շակոր Դովնարաբանյանի կրտսեր ժամանակակից Ստեփանոս Ներսիսյանը (1815-1884): Պետերության Գեղարվեստից ակադեմիա 1840-ին ավարտելուց հետո նա հիմնավորվել է Թիֆլիսում, ուր և անցել է նրա ստեղծագործական կյանքը:

Այսօր հայտնի է Ս.Ներսիսյանին վերագրվող շուրջ 20 աշխատանք, որոնցից մեկը կենցաղային պատկեր է, իսկ մյուսները՝ դիմանկարներ: Դրանց թվում հանդիպում են ինչպես ակադեմիական կանոններով լուծված, խիստ պաշտոնական, հանդիսավոր կտավներ («Գեներալ Բարսեղ Բեհրությանի դիմանկարը», 1857, «Կարողիկոս Ներսես Աշտարակեցու դիմանկարը», 1853-56), այսպես էլ հոգեանական խորությամբ օժտված կամերային աշխատանքներ՝ «Սոփիա Մելիք-Նազարյանի դիմանկարը» (1865), «Գրիգոր Իզմիրյանի դիմանկարը» (1865), «Գ.Ակիմյանի դիմանկարը» և այլն: Թիֆլիսում և Շուշիում նկարչի ստեղծած աշխատանքներից աչքի են ընկնում նաև վաճառական Ավետիք Թամանցյանի և փաստաբան Մելիք-Աղամյանի՝ սոցիալական սուր, բնահատուկ մեկնաբանություն ստացած դիմանկարները: Լայն ժողովրդականություն են վայելել Ս.Ներսիսյանի՝ մեզ հայտնի վերջին յուղաներկ կտավները՝ Մելիքով Մաշտոցի և Սահակ Պարբեկ Երևակայական դիմանկարները (1882):

Դայ նոր շրջանի կերպարվեստում կենցաղային ժամարի առաջին նմուշներից է Ս.Ներսիսյանի «Խնջույք Թոփի ափին» (անթվակիր) թեմատիկ պատկերը: Որոշ նմանություն կա այս ստեղծագործության և ուսու բանաստեղծ Ա.Յու.Լերմոնտովի «Վրացուիկների պարը» (1837), ինչպես նաև նկարիչ Գ.Գ.Գագարինի «Լեզգինկա» (1840) և «Պարող Վրացուիկներ» (1849) գործերի միջև: Սակայն Ս.Ներսիսյանը հիմնովին վերանայել է դրանց կոմպոզիցիոն կառուցվածքը և երգիծական երանք է տվել կտավի միջին պլանում ծավալի սոյութային պատումին: Անհոգ քեֆ անող թիֆլիսից հարուստ մոքալաքներին ու խանումներին Ս.Ներսիսյանը հակադրել է նրանց համեմի ժամանց սպասարկող մարդկան: Իր սոցիալական բովածությամբ համարկանական բովածությամբ ուղարկուել է նրանց պատկերը:

Երգիծական հնչերանգներով արվեստագետի այս աշխատանքը աղերսներ ունի ռուս քննադատական ուսալիզմի հիմնադիր, Ս.Ներսիսյանի ակադեմիական դասընթերի Պ.Ա.Ֆեղոտովի մկարեների հետ:

Սամնկավարժական գործունեությամբ և հայկական թեմաներով արված մի շարք կտավներով («Արարատի հովիտը», 1882, «Նոյն իշնում է Արարատից», 1887, «Դայ ժողովոյի մկրտությունը», 1892 ևն) ազգային նոր կերպարվեստի ձևավորմանն է նպաստել Շովիաննես Այվազովսկին (1817-1900): Նկարիչը ծովը պատկերել է տարվա տարրեր եղանակներին, օրիվա տարրեր ժամերին, տարրեր վիճակներում: Դատկապես մեծ ներշնչանքով է նա ներկայացրել փորորկի տեսարանները և ալիքների մեջ սուրված, խորտակվող, հուսահատորեն կամ հերոսարար փրկություն տենչող, անսանծ տարերքին մի կերպ դիմադրող, ուժասպառ մարդկանց մաքառումները («Իններորդ ալիք», 1850, «Փորորիկն օվկիանոսում», 1864, «Փորորկված ծովը», 1872, «Նավարեկություն», 1876, «Ուս ծովը», 1881, «Ալիքների մեջ», 1898 ևն): Թեև Յ.Այվազովսկու ստեղծագործական մերոյի հիմքում ընկած են ակադեմիզմի սկզբունքները, այնուամենայնիվ, մարդկային կենացի հոյզերով լցուն նրա լավագույն աշխատանքները ռոմանտիկական մտածողության դրսնորումներ են:

Յովի Այվազովսկին որոշակի ազդեցություն է թողել հայկական ծովանկարչության և, առհասարակ, բնանկարի զարգացման վրա: Նրա մոտ սովորել, նրա խոսքով ու խրատներով են առաջնորդվել արևելահայ և արևմտահայ ծովանկարիչներ Ս.Շիվանյանը, Է.Մահտեսյանը, Ա.Շաքրանյանը, Վ.Մախոյանը, հայ ազգային բնանկարի և պատմանկարի հիմնադիրներ Գ.Բաշինցայանը և Վ.Սուրենյանը, նկարչությամբ տարված դերասան Պ.Աղամյանը, բանաստեղծ Տ.Չրաքյանը (Խնտրա) և ուրիշներ: Յովի Այվազովսկին երբեք չի եղել Դայաստանում, բայց նա մշտապես սերտ կապերի մեջ է գտնվել հայ հասարակական և պատմամշակութային իրականության հետ:

Իր ստեղծագործական կյանքը գրեթե ամբողջությամբ վիճագրական արվեստին է նվիրել Յովնաթանյանների տոհմի վերջին ներկայացուցիչ, Պետերբուրգի Գեղարվեստից ակադեմիայի ընթացավարտ Աղառոն Շովնաթանյանը (1816-1893): 1844-ին նա վերադարձել է Թիֆլիս, բայց շուտով կրկին մեկնել Պետերբուրգ, որտեղ էլ ապրել է ու ստեղծագործել: Թիֆլիսում գտնվելիս Ա.Յովնաթանյանը հավանաբար, նկարչական մի քանի պատվերներ է ստացել: Նրան են վերագրում, մասնավորապես, վաճառականներ Պ.Աղամյանյանի և Պ.Պետրոսյանի դիմանկարները: Եթե դա իրոք այդպես է, ապա կարելի է ասել, որ հանձին Ա.Յովնաթանյանի XIX դարակեսի հայ կերպարվեստն ունեցել է ևս մի խոչոր դիմանկարիչ: յուղաներկով արված այդ կտավները թե՛ կատարողական վարպետությամբ, թե՛ կերպարների հոգեբանական մեկնաբանությամբ չեն զիջում Ս.Ներսիսյանի աշխատանքներին:

Պետերբուրգում հաստատվելուց հետո Ա.Յովնաթանյանն, ըստ էության, այլևս չի զբաղվել ստեղծագործական ինքնուրույն աշխատանքով՝ սահմանափակվելով ինչպես իր եղբոր, այնպես էլ ռուս նկարիչների հերինակած կտավների ու գծանկարների վիճակիա վերարտադրությամբ:

XIX դարի կեսերին առաջին քայլերն է առել արևելահայ գրաֆիկան: Իրենց ուժերի ներածին չափով դրան նպաստել են Պետերբուրգի Գեղարվեստից ակադեմիայում ուսանած Շովիաննես Պատկանյանը (1826-

1896) և Շովիաննես Քարանյանը (1827-1894): Վերջինս՝ Սոլոմոն Արամենիքյանի և Սկրտիչ Շովիաննեսյանի հետ մեկտեղ, համարվում է նաև արևելահայ բնանկարչության հիմնադիրը:

Բավարար չափով չի ուսումնասիրվել այդ նույն շրջանի արևմտահայ կերպարվեստը: Կապված չինելով ռուսական գեղարվեստական մշակույթի և նրանում արտացոլված գաղափարական բովանդակության հետ, սա թիվ է գրավել արևելահայ քննադատների ուշադրությունը և գրեթե անտեսվել խորհրդահայ արվեստաբանների կողմանց: Դեր են խաղացել նաև օբյեկտիվ պատճառները: Սակավաթիվ են XIX դարի առաջին կեսի արևմտահայ արվեստագետներին վերաբերող տեղեկությունները: Մատների վրա կարելի է հաշվել այդ, շրջանից մեզ հասած արևմտահայ կերպարվեստի բնագիր օրինակները<sup>1</sup>: Դատատ կարող ենք ասել հետևյալը. արևելահայ նոր կերպարվեստի համեմատությամբ, արևմտահայ կերպարվեստում այդ ժամանակ տեղի ունեցած բարեփոխումները ընթացել են ավելի դանդաղ ու երկշուտ, չեն կրել նույնքան խոր ու արմատական բնույթը:

Ավատատիրության ճահճի մեջ խրված Օսմանյան Թուրքիան թե՛ հասարակական-քաղաքական և թե՛ մշակութային զարգացման տեսակետներից հետ էր մնում բուրժուական տնտեսվարության արահետները դեռ նոր ոտք դրած, բայց մշակութային մեծ վերելք ապրող Ռուսաստանից: Այդ տարիներին Արևմտյան Դայաստանում, ինչպես և Թուրքիայի հայաշատ քաղաքներում Զնյուրնիայում, Կոնիայում, Աղճանյում, Բուրսայում, Ֆյորահիայում և այլուր, գեղարվեստական կյանքը գրեթե մերած էր: Նույնիսկ Եվրոպայի մայրցամաքուն գտնվող և եկոպական կեցվածք ստանալու ճիգեր գործադրող Կոստանդնուպոլիսում, ուր բնակչության գգալի ճամսը հայերն էին, գեղարվեստական կյանքի զարկերակը բույլ էր բարակում: Իրավիճակը փոխվում է միայն այսպես կոչված «քանզինաթի» քաղաքական և տնտեսական ծանր զգնաժամ ապրող Օսմանյան Թուրքիային Եվրոպական երկրների պարտադրած բարենորոգման շրջանում (1839-76 թք.), եթե որոշ չափով աշխատանուն է արևմտահայ և, հատկապես, Կ.Պոլսի հայ բնակչության ոչ միայն հասարակական-քաղաքական, այլև մշակութային կյանքը: Աստիճանաբար գիտակցում է աշխարհիկ նոր կերպարվեստի ինչպես լուսավորական, այնպես էլ գեղարվեստական նշանակությունը: Նկատելիորեն աճում է մասնավոր պատվերների ու պատվիրատունների թիվը: Ասպարեզ են մտնում ոչ միայն ինքնուս, այլև Եվրոպայում մասնագիտական կրթություն

<sup>1</sup> Ատենախոսության այս գլուխն արդեն շարադրված էր, եթե Ստամբուլում թուրքերն և անգլերն լեզուներով լույս տեսավ Գարո Քյուրքմանի՝ 1600-1923 թք. Օսմանյան կայսրության տարածքում ծնված հայ նկարիչներին ներկայացնող ստվարածավալ, հազարից ավելի գունավոր և միագոյն սպատկերներ ընդգրկող երկիրատորակը (Կյորկուան Գար, Armenian painters in the Ottoman Empire (1600-1923). Istanbul, Matousalem publications, 2004, 988 թ., ill.), որն զգալիորեն ընդլայնում է մեր պատկերացուները տվյալ շրջանի ու, մասնավորաբար, XIX դարի արևմտահայ կերպարվեստի ճաման: Սակայն Թուրքիայի, ինչպես նաև աշխարհի հայաշատ մի շաք երկրների բանգարաններում, արխիվներում, գիտական կենտրոններում, վանքերում ու եկեղեցներում, անհատ բազմաթիվ հավաքողների մոտ պահպանվող և մեծամասամբ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող հայութափառ այդ աշխատանքների մեջ ևս հազիկ թե գտնենք 1830-70 թք. կատարված, ստույգ քագրված գեր 30 գործ: Ըստ որում, դրանցից շատերը ոչ թե գեղարվեստական ինքնուրույն ստեղծագործություններ են, այլ Եվրոպական նկարչական պատկերացուների թիվը: Ասպարեզ են մտնում ոչ միայն ինքնուս, այլև Եվրոպայում մասնագիտական կրթություն:

ստացած առանձին հայ արվեստագետներ՝ առավելապես դիմանկարիչներ, որոնց ջանքերով էլ առաջանում է արևոտահայ նոր, աշխարհիկ նկարչությունը:

Ըստանու առնամբ ռեալիստական ձևերով լուծված մանրանկարների ու հաստոցային դիմանկարների հեղինակներ են *Մանասների* ընտանիքի վերջին շարավիղները՝ Ձենոր Մանասի զավակներ Ռուբենը, Սեպուհը, Ալեքսանդրը, Գասպարն ու Մաքսուլը, ինչպես և նրանց հորեղբորորդի ժողեք (Դովենի) Մանասը:

Կ.Պոլսում և Զնյուռնիայում են աշխատել լուսանկարիչներ Արդուլլա (Արդուլլա այսա) եղբայրները, որոնցից երեքը՝ Վիշենը, Գևորգը և Հովսեփի գրադարձներում:

XIX դարի կեսերին է ասպարեզ մտել պրոլետար անվանի բարերար Հակոբ Չելեպի Քյուրքչյանի որդու՝ Հոռոմուն գեղարվեստական կրթություն ստացած Սարգար Քյուրքչյանի աշակերտ Հովհաննես Պեյզայը (Ռմենտ Բեհզադ, 1809-1874), որն ստեղծել է բազմաթիվ եկեղեցական պատկերներ («Այլակերպություն», 1848, «Չորս ավետարանիչները», 1850, «Խորհրդավոր ընթրիք», 1853, «Խաչից ցած բենելը», 1869, «Գերսենանի», 1872 ևն) ու հաստոցային կտավներ՝ դիմանկարներ («Մուսաքա Ռեշիդ» փաշայի դիմանկարը), 1842, «Հովհաննես Այվազովսկու դիմանկարը», «Աննա մայրապետի դիմանկարը»), բնանկարներ («Կ.Պոլսի տեսարանը», «Սիհազարյան ջրվեժը»), թեմատիկ պատկերներ («Վիշենայի գրավումը թուրքերի կողմից», «Վրանաբնակ գնչուներ») և այլն:

Կ.Պոլսում է ծնվել և որոշ ժամանակ Յ.Պեյզայի արվեստանոցը հաճախել դիմանկարի ժամրում մասնագիտացած Արրահամ Սաքայանը (1821-1876), որի գործերից են «Նիկողայոս Զորայանի դիմանկարը» (1844), նկարչի հոր՝ ջրկիր Ադամի, բարերար Պողոս Օսյանի, ճարտարապետ Կարապետ Պայսանի և այլոց կենդանագրերը:

Դայաստանի ազգային պատկերասրահում և Եջմիածնի թանգարանում են պահպան Պետրոս Արապյանի (1833-1898) աշխատանքներից նի քանիքը, որոնք լուսանկարներով հայտնի նրա առանձին ստեղծագործությունների հետ մեկտեղ բավականաչափ պատկերացում են տալիս նկարչի ժամանակ նախային նախասիրությունների ու գեղարվեստական մերոդի նասին «Ժուրաքական սրճարան», «Թոշնանոց», «ճարտարապետ Սարգիս Պայսանի դիմանկարը», «Դայուիի» (Ա.Ֆ.Տոգունի դիմանկարը), «Ղարիբ մշեցի» (1882), «Որսորդական նատյուրմորտ» (1889), «Սկրտիչ Խորիմյանի դիմանկարը» (1895), «Մեսրոպ Սաշտոցի տեսիլը» (1896) և այլն:

Դիմանկարնում եկեղեցական նկարչությամբ, նաև՝ դիմանկարչությամբ է գրադարձնել եպիսկոպոս Մամբրե (Կարապետ) Մարկոսյանը (1835-1907), որի ստեղծագործական կյանքի մեծ մասն անցել է Երևանադեմում:

1859-62 թթ. Վենետիկի Գեղարվեստից ակադեմիայում է սովորել պրոլետար նկարիչ Մելքոն Տիրացույանը (Տիրասուրյան, 1837-1904): Նա է կատարել Կ.Պոլսի, Բուրսայի, Կասիփ, Երգումի հայ կաթոլիկ եկեղեցիների սրբանկարներ՝ «Տիրանայո», «Սանտա Լուչիա», «Քրիստոսի մկրտությունը» և այլն: Մ.Տիրացույանը նաև թուրք փաշաների, ինչպես և մեծահարուստ եվրոպացիների՝ իմանականում հանդիսավոր դիմանկարների հեղինակ էր: Նրա այդ կարգի աշխատանքներից են Հովհաննես Թնկիյանի (1866) և պատրիարք Ազատյանի կենդանագրերը: Ավելի բնական ու անհիշական են մասնավոր անձանց եսայանի, Կարագյոյանի, Փողութայանի, թիվի եմճանութել Հայանի և այլոց

դիմանկարները: Մ.Տիրացույանը աշխատել է նաև բնանկարի ժամրում: պատկերել է Կ.Պոլսի ընդհանուր տեսարաններն ու քաղաքի գեղատեսիլ արվածանները:

Սրբամտահայ նոր կերպարվեստի ներկայացուցիչներից էր իմքնուս նկարիչ և քանդակագործ Սովոր Պեղիրյանը (1839-1919), որը ճանաչված էր իր արդուունի զարդանկարիչ: Երփնագիր և գրաֆիկական դիմանկարների հեղինակ էր ականավոր արևելագետ և արվեստարան Արմենակ Սագրայանի հայր՝ Շովհաննես Սագրայանը (1836-1912):

XIX դարի կեսերին կերպարվեստի ասպարեզում իր ուժերն է փորձել դերասան Շովհաննես Սածենյանը (1828-1871):

Նոր շրջամի արևմտահայ բնանկարչության հիմնադիրներն են Շարություն Պալտուալյանը (1800-1870) և Շարություն Շեքհյանը:

Գրաֆիկայի հիմքերն են դրել անվանի տպագրիչներ ու վիմագրության վարպետներ՝ Զնյուռնիայում գործած Պողոս Թաթիկյանը (1820-1868-ից հետո) և Կ.Պոլսում աշխատած ճամփի Արամյանը (1820-1879):

1860-ական թթ. նկատվող կարճատև դադարից հետո հայ կերպարվեստն աննախանեակ վերելք է ապրում: Եթե մինչև այդ նրա քիչ թե շատ զարգացած միակ տեսակը նկարչությունն էր, ապա այժմ՝ Պետերբուրգի, Սուսվայի, Փարիզի, Յոնի, Եվրոպական մյուս կենտրոնների Գեղարվեստից ակադեմիաները, բարձրագույն ուսումնարանները կամ գեղարվեստական մասնավոր կրթարաններն ավարտած հայ գեղանկարիչների հետ ասպարեզ են մտնում գրաֆիկական արվեստին ու քանդակագործությանը նվիրված վարպետներ: Եթե նախորդ շրջամի թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ արվեստագետները մեծ մասամբ դիմանկարիչներ են, ապա նոր սերնդի ներկայացուցիչներն աշխատում են նաև բնանկարի, կենցաղային պատկերի, պատմանկարի, ճատուրմորտի ժամրերում: Նախկինում իշխող ակադեմիզմի, ոռմանտիզմի ու ռեալիզմի կողմին ի հայտ են գալիս Եվրոպական նորագույն կերպարվեստում առկա գորեք բոլոր հիմնական միտունները՝ հմարեսինիզմից ու «մոդեռն» ոճից մինչև կուրիզմ, ֆուտուրիզմ և այլն: Սակայն հայ նկարիչների ու քանդակագործների աշխատանքներում գեղարվեստական-ծևածական այս իրարաներժ, երրեմն էլ ժամանակավետ ուղղությունները հաճախ համատեղվել կամ խաչասերվել են: Դա բացատրվում է նրանով, որ տվյալ շրջամի հայ կերպարվեստը հասունացել է հայրենիքից դուրս, փութաքայլ կերպով, զարգացման տարրեր աստիճանների վրա գտնվող օտար նշակույթների ներգործության տակ:

Մեզ հետաքրքրող դարաշրջանի հայ արվեստագետներն ու մշակության գործիչները ջանք չեն խնայել իրենց ուժերը հաճախմբելու, «ազգային ոճով» արտահայտվելու համար: Այդ հարցերի շուրջ հաճախ են խորենի ու խորհրդաժեռ, հատկապես, Ալեքսանդր Շերվանջյանը, Վարդգես Սուլեյմանցը, Թորոս Թորամանյանը, Արշակ Ֆերվանյանը և ուրիշներ: Ոմանք ել դրանք փորձել են լուծել գործնականորեն՝ ազգային կադրեր պատրաստող գեղարվեստական դպրոցներ, ուսումնարաններ կամ արվեստին նվիրված թերեր և հանդեսներ հրատարակելու, ազգային ստեղծագործական ակումբներ, ընկերություններ ու միություններ հիմնելու, ցուցահանդեսներ կազմակերպելու միջոցով:

Ծնորհակի հայ պատմաներին և աղջկաներին տեղում կրթելու գործում մեծ դեր է կատարել 1873-ին Թիֆլիսում հիմնարդիված Գեղարվեստական

ընկերության (1877-ից՝ Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերություն) նկարչական դպրոցը, որտեղ երկար տարիներ նկարչություն է դասավանդել Եղիշե Թաղևոյանը: Մասնագիտական լուրջ կրթարաններ են եղել 1883-ին քանդակագործ Երվանդ Ռուկանի ակտիվ միջամտությամբ Կ.Պոլսում բացված Օսմանյան Գեղարվեստից վարժարանը և 1901-06 թթ. Թիֆլիսում գործող՝ Պետերբուրգի Գեղարվեստից ակադեմիային ենթակա միջնակարգ ուսումնարանը: Ե.Թաղևոյանից ու Ե.Ռուկանից բացի մանկավարժական գործունեությամբ են զբաղվել նաև Ս.Տիրացույանը, Յ.Շամշինյանը, Գ.Բաշինջայանը, Փ.Թերլենեցյանը, Բ.Փիրառյանը, Դ.Օքրոյանցը, Գ.Լևոնյանը, Վ.Գայֆենյանը, Ե.Դեմիրյանը, Վ.Մանավյանը և ուրիշներ:

Ազգային նոր կերպարվեստի զարգացումը խթանելու, առկա գեղարվեստական ուժերը հավաքագրելու առունով կարևոր դեր են խաղացել 1874-ին, 1881-ին, 1882-ին ու հետագայում հայ արհեստավարժ և ինքնուս արվեստագիտների մասնակցությամբ Կ.Պոլսում կայացած նկարահանդեսները: Այդ տեսակետից էլ ավելի կարևոր նշանակություն են ունեցել Թիֆլիսում պարբերաբար կազմակերպվող ցուցադրումները, որոնք բացվել են Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության (1888-ից), Կովկասյան նկարիչների փոխօգնության (1907-ից) և 1916-ին իմանտրված Հայ արվեստագիտների միունքում նախաձեռնությամբ: Քաղաքի գեղարվեստական կյանքը աշխատավոր էին հայ նկարիչներ ու քանդակագործներ Յ.Շամշինյանի, Դ.Արտազյանի, Գ.Բաշինջայանի, Ա.Ֆերվաճյանի, Յ.Յակոբյանի, Վ.Գայֆենյանի, Գ.Շարբարյանի, Ե.Քոչարի և այլոց անհատական ցուցահանդեսները: «Տարագ» հանդեսի ցուցարարություն և Շովի.Թումանյանի «Վերնատանը» հաճախ հավաքվել ու ազգային նշանակություն հակատագրի մասին են խոսել թիֆլիսարևանակ և դրսից եկած հայ գրողներն ու արվեստագիտները:

Հատուկ հիշատակության են արժանի XIX դարի վերջին քառորդում և XX դարի առաջին երկու տասնամյակներում Թիֆլիսում, Կ.Պոլսում, Պետերբուրգում, Փարիզում, Վենետիկում և այլուր հրատարակված գրական-գեղարվեստական թերթերը, հանդեսներն ու տարեգործերը («Արծագանք», «Ծաղկի», «Ալաքա», «Տարագ», «Անահիտ», «Գեղումի», «Բանքեր», գրականության և արվեստի», «Կոռունկ», «Գեղարվեստ», «Ծանր», «Մեհյան», «Նավասարդ» և այլն), որոնց էջերում լուսաբանվել են նաև կերպարվեստի խնդիրները: Հետզինետն ծևավորվել են ու առաջին քայլերն արել ազգային արվեստագիտությունը (Ա.Տեր-Մովսիսյան, Գ.Յովսեփյան, Ա.Սագոյան, Գ.Լևոնյան) և գեղարվեստական քննադատությունը (Պ.Աղամյան, Յ.Արայիան, Գ.Բաշինջայան, Ա.Շիրվանզադե, Վ.Սուրենյանց, Ե.Լալայան, Լ.Սագիրյանց, Լ.Սամվելյան, Ա.Երեմյան, Ա.Չոպանյան, Տ.Եսայան, Դ.Օքրոյանց, Ս.Բաբիյան, Յ.Այսանաք, Գ.Շարբարյան, Տ.Զերկուրյան, Կ.Զարյան, Ո.Շիշմանյան և ուրիշներ):

XIX դարի վերջին տասնամյակներում հայկական գեղանկարչության մեջ մինչև այդ բացառիկ նշանակություն ունեցող պորտրետային ժանրը աստիճանաբար իր տեղն է զիջել բնանկարին: բնության տեսարաններին անդրադարձել են վարպետներից շատերը, իսկ առանձին արվեստագիտների մոտ դրանք հատկապես կարևորվել են:

Հայ ազգային բնանկարի հիմնադիրն է Պետերբուրգի Գեղարվեստից ակադեմիայի շրջանավարտ Գևորգ Բաշինջայանը (1857-1925): Ուսուական ուշ ակադեմիզմին բնորոշ գծերն արտացոլվել են նրա վաղ շրջանի

աշխատանքներում («Լեռնային բնանկար», 1882, «Կեչիների պուրակը», 1883, «Կեչիներ», 1886 ևն): Դա դրսելով է, մասնավորապես, մուգ կոլորիտի, գծանկարի որոշ չորսության, բնապատկերի մի տեսակ սառած, հուզականությունից զուրկ կերպավորման մեջ: 1890-ական թթ. մի շարք գործերում, Յ.Այվազովսկու և Ա.Ի.Կուինջիի ազդեցության տակ, Գ.Բաշինջայանը զգալիորեն հագեցրել է իր գունապնակը: Վաղորդյան, ցերեկային մառախչապատ ու գիշերային լուսնկա տեսարաններին («Վաղ առավոտյան», 1896, «Գիշեր: Ծովափ», 1897, «Անպամած եղանակ», 1897, «Անձրևոտ օր», 1899 ևն) նա բանաստեղծական շունչ ու ռոմանտիկական խորհրդավորություն է հաղորդել: Կարևոր նշանակություն է ունեցել 1899-1901 թթ. Ֆրանսիա կատարած նրա ուղևորությունը: Ակարիչը ծանոթացել է ֆրանսիական «բարիգոնյան դպրոցի» և իմպրեսիոնիստների ստեղծագործական մերուների հետ: Դրա շնորհիվ նա վերջապես ազատվել է ակադեմիական չոր գծանկարից, իր կտավները հարստացրել գուներանգների նուրբ անցումներով, որոնք նրա բնանկարները թարմացրել են և օժտել օդային թափանցիկությանը («Բորժոմի շրջակայքը», 1902, «Զանգեզուր», 1904, «Դեպի Արարատ», 1912 ևն):

Իր բնանկարներում իմպրեսիոնիզմին է հարել Մոսկվայի Գեղանկարչության, քանդակագործության և ճարտարավետության ուսումնարանում Վ.Դ.Պոլենովին աշակերտած Եղիշե Թաղևոյանը (1870-1936): 1890-ական թթ. աճռանձ նույսաստանում և Շայաստանում նրա ստեղծած բնանկար ետյուդներն ու փոքրադիր պատկերները («Բակ Բոգորոդսկում», 1892, «Էջմիածնի լճափին», 1894 ևն) աչքի են ընկնում գունային թարմ զգացողությամբ, ներդաշնակ բազմերանգությամբ, տեսողական տպավորությունների անհջական վերտարադրությամբ: Ե.Թաղևոյանի գունային բնանկարներն էլ ավելի են սրվել 1899-1900 թթ. դեպի Մերձավոր Արևելք և Յարավային եվրոպա կատարած ճանապարհորդություններից հետո: Խոշոր չափսերի պայմանուն սերմանակարչությունը հազվադեպ էին մկարչի արվեստում: Դրանցից են «Արարատը Էջմիածնից» (1894), «Արարատյան դաշտավայրը» (1906), «Արագածը» (1917) և այլն:

Ե.Թաղևոյանը ստեղծագործական լայն դիմապարունակություն տեր արվեստագիտ է: Բնանկարից բացի նա զբաղվել է կենցաղային ժանրով («Դեպի օտարություն», 1894, «Կեսօրյա ճաշը», 1897, «Երկրպագություն խաչին», 1901 ևն), դիմանկարով («Ո.Սուրենյանը», 1891, «Նկարչի կնոջ դիմանկարը», 1903, «Քանդակագործ Յ.Գյուրջյանը», 1914 ևն), ստեղծել կրոնանկան և պատմաթիշաբանական պատկերներ («Գրիգոր Լուսավորչի տեսիլքը», 1900, «Ա.Շիրվասիմե», 1911, «Քրիստոսը և փարիսեղները», 1916-23 ևն): Նկարչի արվեստում որոշակի տեղ են գտել նաև այլաբանական ու խորհրդապաշտական հորինվածքները՝ «Իմ անուշըները» պատկերաշարքը (1901-05), «Թռչունների համերգը», «Սոնետ» (1909), «Դանճարն ու ամբոխը» (1909) և այլն:

Ե.Թաղևոյանը ստեղծագործական լայն դիմապարունակություն տեր արվեստագիտ է: Բնանկարից բացի նա զբաղվել է կենցաղային ժանրով («Դեպի օտարություն», 1894, «Կեսօրյա ճաշը», 1897, «Երկրպագություն խաչին», 1901 ևն), դիմանկարով («Ո.Սուրենյանը», 1891, «Նկարչի կնոջ դիմանկարը», 1903, «Քանդակագործ Յ.Գյուրջյանը», 1914 ևն), ստեղծել կրոնանկան և պատմաթիշաբանական պատկերներ («Գրիգոր Լուսավորչի տեսիլքը», 1900, «Ա.Շիրվասիմե», 1911, «Քրիստոսը և փարիսեղները», 1916-23 ևն): Նկարչի արվեստում որոշակի տեղ են գտել նաև այլաբանական ու խորհրդապաշտական հորինվածքները՝ «Իմ անուշըները» պատկերաշարքը (1901-05), «Թռչունների համերգը», «Սոնետ» (1909), «Դանճարն ու ամբոխը» (1909) և այլն:

Ե.Թաղևոյանը ստեղծագործական լայն դիմապարունակություն տեր արվեստագիտ է: Բնանկարից բացի նա զբաղվել է կենցաղային ժանրով («Դեպի օտարություն», 1894, «Կեսօրյա ճաշը», 1897, «Երկրպագություն խաչին», 1901 ևն), դիմանկարով («Ո.Սուրենյանը», 1891, «Նկարչի կնոջ դիմանկարը», 1903, «Քանդակագործ Յ.Գյուրջյանը», 1914 ևն), ստեղծել կրոնանկան և պատմաթիշաբանական պատկերներ («Գրիգոր Լուսավորչի տեսիլքը», 1900, «Ա.Շիրվասիմե», 1911, «Քրիստոսը և փարիսեղները», 1916-23 ևն): Նկարչի արվեստում որոշակի տեղ են գտել նաև այլաբանական ու խորհրդապաշտական հորինվածքները՝ «Իմ անուշըները» պատկերաշարքը (1901-05), «Թռչունների համերգը», «Սոնետ» (1909), «Դանճարն ու ամբոխը» (1909) և այլն:

Ե.Թաղևոյանը ստեղծագործական լայն դիմապարունակություն տեր արվեստագիտ է: Բնանկարից բացի նա զբաղվել է կենցաղային ժանրով («Դեպի օտարություն», 1894, «Կեսօրյա ճաշը», 1897, «Երկրպագություն խաչին», 1901 ևն), դիմանկարով («Ո.Սուրենյանը», 1891, «Նկարչի կնոջ դիմանկարը», 1903, «Քանդակագործ Յ.Գյուրջյանը», 1914 ևն), ստեղծել կրոնանկան և պատմաթիշաբանական պատկերներ («Գրիգոր Լուսավորչի տեսիլքը», 1900, «Ա.Շիրվասիմե», 1911, «Քրիստոսը և փարիսեղները», 1916-23 ևն): Նկարչի արվեստում որոշակի տեղ են գտել նաև այլաբանական ու խորհրդապաշտական հորինվածքները՝ «Իմ անուշըները» պատկերաշարքը (1901-05), «Թռչունների համերգը», «Սոնետ» (1909), «Դանճարն ու ամբոխը» (1909) և այլն:

ընդօրինակող «Ալլան-աղան» (1912):

Այս ուղղությամբ է ընթացել և ոճական այլ սկզբունքների վրա խարսխվել Ա.Ֆերվաճյանի և Փ.Թերլեմեզյանի ստեղծագործությունը:

Տրապիզոնում ծնված **Արշակ Ֆերվաճյանի** (1866-1947) արվեստի կողմնորշչան համար կարևոր նշանակություն է ունեցել 1899-ին Ռուսաստան կատարած ուղղությունը: Պետերբուրգի Դաշտաստան գալով նա ծանրթացել է հայրենի բնության, Անիի և հարակից շրջանների ճարտարապետական հուշարձանների հետ՝ ստեղծելով մի քանի տասնյակ ջրամկարներ ու բազում մատիտանկարներ, որոնք ունեն ոչ միայն գեղարվեստական, այլև վավերագրական մեջ արժեք: Դետարբիրի են նրա դաշտանկարներն ու ծովանկարները («Ծով: Արևածու», 1899, «Ալեքսանտրով Սև ծովի ափին», 1903, «Արագած», 1908 ևս):

Իրապաշտական արվեստի հունով է շարժվել **Փանոս Թերլեմեզյանը** (1865-1941), որը ծնվել է Վանում, պատամի հասակից նվիրվել ազգային-ազատագրական պայքարին, հետապնդվել բուրք կառավարության կողմից: Նկարիչը հաճախ է ուղղություն Արևելյան Դաշտաստան ու վրձնել մի շարք բնանկարներ՝ «Եջմիածի Մայր տաճարը» (1903), «Սամահին գյուղը» (1904), «Սամահին լեռները» (1905), «Արագածն աշնանը» (1907) և այլն, որոնցում դեռ որոշ չորրություն է նկատվում: Բայց արդեն Փարիզում կատարված քաղաքային տեսարաններում («Հատրվան: Փարիզ», 1909, «Փարիզը գիշերով», 1910 ևն) Փ.Թերլեմեզյանը դիմում է պատկերման իմարեսինիստական եղանակին՝ ներորեն վերարտադրելով ջրի մեջ ընկած արկի ճառագայթները և արիեսական լուսավիրությամբ հրավառված գիշերային փողոցները: 1910-ական թթ. հաջողված աշխատանքներից են «Կան լիճը և Սիփան սարը Կոտուց կղզուց» (1915) բնանկարը և «Կոմիտաս» (1913) թեմատիկ դիմանկարը:

XIX դարի վերջին քառորդում ասպարեզ մտած բնանկարիչներից են պուսահայեր Վ.Արսլանյանն ու Ս.Եսայանը, եգիպտահայ վարպետ Ե.Ղեմիրյանը, Սոսկվայում ապարած Է.Ալաջալովը, Քիֆիսարնակ Ա.Միրզոյանը և ուրիշներ: Յ.Այվազովսկուց բացի հայ ժողովուրդը տվել է ևս մի քանի ծովանկարիչներ, որոնցից առավել հայտնի են Է.Մահտեսյանը, Ա.Շաքարյանը, Վ.Մախոյանը և Կ.Աղամյանը: Նոյն ժամանակակից աշխատած այլ արվեստագետներից նշենք Պ.Շաշյանին, Յ.Տամայանին, Ս.Շիվանյանին, Գ.Յագմանյանին, Ս.Զաքարյանին, Գ.Չիլինգիրյանին, Յ.Գագանջյանին:

Դաշտական բնանկարի հետագա զարգացումը կապված էր նոր, երիտասարդ սերնդի նկարիչների ստեղծագործության հետ, որոնք արվեստում իրենց ինքնուրույն քայլերն են արել 1900-10-ական թթ.: Յիշնականում պետքային բարձ եղանակով կամ իմարեսինիստական ոճով են լուծված Վ.Գայքեցյանի, Յ.Ալյանաքի, Յ.Ալյազյանի, Ս.Առաքելյանի, Ո.Շիշմանյանի և այլոց պեղածները:

Բայց այդ շրջանի հայ նկարչությունն ու, մասնավորաբար, բնանկարը գեղարվեստական նոր որակ, արդիսկան շունչ և ազգային դիմագծեր են ծեռք բերել հատկապես Մարտիրոս Մարտիրոս (1880-1972) աշխատանքներում: Սոսկվայի Գեղանկարչության, քաղաքագործության և ճարտարապետության ուսումնարանն ավարտելուց հետո նա միահօթամանակ հարել է «Շուշանական գոլցակ» («Երևանագույն վարող»)՝ ուսւ խորհրդապաշտ նկարիչների խմբակցությանը և ստեղծել արևելյան մոտիվներով երազկոտ պատկերներ («Փերիների լիճը», 1905, «Սեր», 1906, «Գիսաստղ», 1907 ևն): 1910-ական թթ. սկզբին Մերձավոր

Արևելք կատարած ուղևորությունների, ինչպես նաև հայկական ու պարսկական հին նկարչության, ապա ֆրանսիական նոր կերպարվեստի տպավորությամբ Մ.Սարյանը ծայրահեղորդն լարել ու միաժամանակ պարզեցրել է իր ներկապնակը՝ աշխատելով հիմնական և օժանդակ գույնների կտրուկ հակադրության սկզբունքով: Արդյունքում նկարչի կտավները ծեռք են բերել ոչ միայն դեկորատիվ հնչողություն, այլև մոնումենտալ շրւն: Այդպիսի տպավորություն են բողոքում Մ.Սարյանի 1910-ական թթ. լավագույն բնանկարները՝ «Փողոց: Կեսօր: Կ.Պոլիս» (1910), «Գիշեր: Եգիպտոս» (1911), «Արմավենի: Եգիպտոս» (1911) և այլն:

XIX դարի վերջին քառորդում և XX դարի առաջին երկու տասնամյակներում որոշակի զարգացում է արել թեժատիկ պատկերը, որն առավելապես դրսություն է կենցաղային ժամանակաշրջան ժամանակաշրջանում և պատմանկարչության մեջ:

Յիշնականում կենցաղային բնույթ են կրում թիֆլոսում ծնված, Պետերբուրգի Գեղարվեստից ակադեմիայում ուսանանալու ժարություն Շամշինյանի (1856-1914) կտավները: Նրա ստեղծագործական կյանքում հատկապես բնանկարչություն է 1880-90-ական թվականները. նկարչի բնորոշ աշխատանքները՝ «Փողոց Սալյանում» (1883), «Շայքան-բազար» (1890), «Ղեյնորա» (1893) և այլն, ժողովրդական կամ եկեղեցական տոներ, դիմակավորված հանդիսախաղեր, հարսանյաց թափորմեր կամ ուխտավորական երերե պատկերող բազմամարդ, աղմկոտ ժեստարաններ են:

Գլխարվապես կենցաղային ժամանում է աշխատել Մոսկվայի Գեղանկարչության, քաղակագործության և ճարտարապետության ուսումնարանի ընթացավարտ, նոր նախիջևանում ապրած Շայակ Արծարպանյանը (1876-1920), որի ինտերիերային համեստ պատկերները («Ընթերցանություն», «Դաշնանուր նվազող աղջիկը», 1899, «Դիվանդ երեխայի նոտ», 1900 ևն) աշքի են ընկույթ ընտանեկան ու ներանձնական մտերմիկ, խաղաղ, լուռ մանղլորտով, դարձուկ գույների գուսակ ներդաշնական պատկերությամբ: Միանգամայն այլ՝ լարված, անհանգիստ տպավորություն է թողոնում «Դրդի հայկական գյուղուն» (1915) միջին չափսերի յուղանկարը, որը լուծված է Յ.Արծարպանյանին ոչ բնահատուկ՝ մուգ, մռայլանած գուներանգներով: Ուշագրավ են հոգեբանական նույր բնութագրերով օժտված պորտրետային աշխատանքները («Մարտիրոս Մարտիրոս», 1898, «Մարիետա Շահինյան», «Նկարչի դուստրը՝ Վարդակականներով», 1915 ևն):

1915-21 թթ. հայ գաղբականների կանքը պատկերող թեմատիկ շարքեր է ստեղծել Յորմի Գեղարվեստից ակադեմիայում, ապա Փարիզի Զարդարվեստի ուսումնարանում կրթված Մարգիս Խաչատրույանը (1886-1947): Դայ տարագիրների թշվար վիճակին են նվիրված նրա «Որբերը ճաշի են սպասում», «Գուլը են հայ բերելու», «Տանջանը», «Հուսահատները», բազմաթիվ այլ կտավներ: Նոյն տարիներին ստեղծված «Տեր-Զորը» նկարչի եղենային շարքի ամենահայտնի գործներից է: Միևնույն ժամանակ Ս.Խաչատրույանին հիացրել են հայ ժողովրդի կամքն ու տոկունությունը, նրա կենսասեր բնավորությունը: Լավատեսական տրամադրությամբ են շնչում նկարչի «Տնական օր Սևանում», «Գյուղական հարսանիք», «Խորախճանը Օշականում», «Հայ ժողովրդական պարեր», «Հարսի երգը» և այլ աշխատանքները՝ լուծված արտասովոր թարմ, հնչել գույներով:

Կենցաղային ժամանը որոշակի տեղ է գրավել Գ.Արտավազյանի, Կ.Նշանյանի, Գ.Գարբիելյանի, Խ.Տեր-Մինասյանի, Ս.Քյուրքչյանի և այլոց ստեղծագործության մեջ:

Ոչ միայն կենցաղային ժանրի, այլև պատմանկարի ծևափորման ու զարգացման համար բացառիկ դեր է խաղացել Մոսկվայի Գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանի, ապա Սյունիսենի Գեղարվեստից ակադեմիայի սան Վարդգես Սուրենյանցը (1860-1921):

Կենցաղային ժանրում նրա առաջին փորձերից են Թեհրանի և Սպահանի փողոցային տեսարանները, որոնք իրական կյանքից անմիջապես քաղված պատկերներ են: Շեշտված կենցաղային բնույթ ունեն «Թափորի ելքը Եջմիածնի տաճարից» (1895) բազմաթիգուր կտավը և «իսպանական շարքի» յուղաներկ գործերից մի քանիսը («Ալիամբրայի դրամպանը», 1898, «Իսպանացի պարուիհն», 1901 ևա):

Վ.Սուրենյանցի արվեստին առավել բնորոշ են լուսավորական գաղաքարներով ներշնչված, ազգային և հասարակական լայն հենցողություն ունեցող պատմական թեմաները: Արդեն 1890-ական թթ. աշխատանքներում («Լըյալը», 1894, «Ոտնահարված սրբություն», 1895, «Զարդից հետո», 1899 ևա) արձագանք են գտնել սուլթանական Թուրքիայում տեղի ունեցած հայերի ջարդերը: Վ.Սուրենյանցն անդրադարձել է ոչ միայն նորադեպ, այլև հեռավոր անցյալի պատմության՝ ստեղծելով այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Շամիրամն Արա Գեղեցիկի դիակի մոտ» (1899) ու «Սալոնե» (1907) կտավները: Այդ ժանրում հաջողված գործերից են «Կանանց ելքը Անիի Եկեղեցուց» (1905) և «Զարել թագուհու վերադարձը գահին» (1909) աշխատանքները: Պատմական նկարչության հետ է առնչվում «Շոհիփսիմեի վանքն Եջմիածնի մոտ» (1897) բնապատկերը, որը խորհրդանշում է պատմության նորայի հորձանուտներով անցած հայ ժողովրդի ոգու ամրությունն ու շինարար կամքը: Վ.Սուրենյանցը հեղինակել է Արևելի գրականությամբ ներշնչված թեմատիկ պատկերներ («Յաֆիզի երգը», 1895, «Ֆիրդուսի իր Շահնամեն» և կարդում Մահմուտ Ղազմեկին», 1913 ևա): Աշխատանքներից շատերում նա ընտելացրել և արևելյան սուր ու բարկահամ երանգ է տվել Եվրոպական «մոդեռնի» դեկորատիվ-գծային ոճին:

Վ.Սուրենյանցը հայ կերպարվեստում պատմական նկարչության ոչ միայն հիմնադիրն է, այլև տվյալ շրջանի միակ խոչշոր ներկայացուցիչը, թեև այդ ժանրում փորձեր են արել Պետերբուրգի Գեղարվեստից ակադեմիայի կողմէց 1865-ին նկարչի կոչման արժանացած իշխան Ս.Աբրամելիքը, նույն ակադեմիայի շրջանավարտներ՝ Ի.Ե.Ռեսինի աշակերտներ Դ.Օքրոյանցը, Կ.Չիրախյանը և ուրիշներ:

Ազգային դիմանկարչության հետագա զարգացման գործում նկատելի դեր են կատարել արևելահայ արվեստագետներ Ա.Սագինյանը, Տ.Լիսիցյանը, Ա.Բրուտյանը, Բ.Փիրաղյանը, Ա.Կարոբնել-Բաբայանը, արևմտահայ նկարիչներ Ս.Սարկոսյանը, Շ.Սագրայանը, Ս.Շիրանյանը, Ս.Երկանյանը, Զ.Բոյացյանը, Ռ.Սերոբյանը և ուրիշներ:

Գերեք բացառապես դիմանկարչությամբ է գրադիւ Կ.Պոլսում ծնված, Փարիզում գեղարվեստական կրթություն ստացած, ապա Թիֆլիսում և Ալեքսանդրյանում ապրած ենոք Նազարյանը (1868-1928), որի պորտրետային կավճաներկ աշխատանքները («Շովիհանմես Շալամյանի դիմանկարը», 1897, «Մարիամ Շալամյանի դիմանկարը», 1897, «Անհայտ տղամարդու դիմանկարը», 1912 ևա) դեռ ինչ-որ չափով իիշեցնում են Շ.Ռովնարանյանի և Ս.Ներսիսյանի կենդանագործը, թեև նշանակած են գրեթե բնապաշտական մանրախուզությամբ:

Գեղարվեստական որակի և հոգեբանական խորության տեսակետներից ավելի համոզի են Փարիզում կրթված շուշեցի նկարիչ Ստեփան Աղաջանյանի (1863-1940) դիմանկարները: Մինչորդիրդային շրջանի կտավներում նա անդրադարձել է մտերիմների («Դոր դիմանկարը», 1900, «Մոր դիմանկարը», 1900), աշխատավոր հասարակ նարդկանց («Հյուսնի դիմանկարը», 1910, «Բանվորը», 1910, «Զկնորսը», 1912), հայ մտավորականների («Ս.Էքմերչյանի դիմանկարը», 1908, «Խ.Կուսիկյանի դիմանկարը», 1908, «Մ.Շահինյանի դիմանկարը», 1919) կերպարներին: Ոչ մեծ չափսերի այդ աշխատանքները դիմահայաց կամ կիսադեմ պատկերներ են, որոնցում բնորդները սովորաբար ներկայանում են ինտերիերի մեջ:

Չափազանց տպավորիչ են Ս.Սարյանի «Ինքնանկարը» (1909, երկու տարրերակով), «Իվան Շչուկինի դիմանկարը» (1910), «Գարեգին Լևոնյանի դիմանկարը» (1912), «Ալեքսանդր Շատուրյանի դիմանկարը» (1915) և այլն, որոնցում արվեստագետը հրաժարվել է հոգեբանական խոր պրատումներից՝ շեշտը դնելով պատկերված մարդկանց բնավորության ու արտաքինի ամենակայուն, առավել ցայտուն գծերի վրա:

Խոհական-բանաստեղծական նույր տրամադրություններով են համակած արևմտահայ նկարչության խոշոր ներկայացուցիչ Շովիհ Փուշմանի (Փուշմանյան, 1877-1966) դիմանկարները, որոնց մեջ մասը արևելյան ժողովուրդների «ազգային դեմքը» բնորշող ընդհանրական կերպարներ են՝ «Յայաստանի ծաղիկը», «Ծիրազի վարդը», «Արևելքի զարդը», «Շույսի աստղը» և այլն:

Նայուրմորտը մեծ տեղ չի գրադեցրել XIX դարավերջի և XX դարասկզբի հայ գեղանկարչության մեջ, սակայն առանձին արվեստագետների մոտ այն ոչ միայն կարևորվել, այլև բացառիկ նշանակություն է ստացել:

Ազգային կերպարվեստում նայուրմորտի հիմնադիրն է Կ.Պոլսում ծնված, 1867-ից Փարիզում հաստատված ինքնուս նկարիչ Զաքար Զաքարյանը (1849-1923), որին շատերը, այլ թվում նաև եղագա նեզան անվանել են «մերույա Շարդեն»՝ նրան իրավամբ համեմատելով XVIII դարի ֆրանսիացի մեծ ռեալիստի հետ: Իր կյանքի ընթացքում Զ.Զաքարյանը ստեղծել է փոքրադիր տասնյակ նայուրմորտներ («Սալոներ», «Դեղձեր», «Խաղողո», «Երաժշտական գործիքներ», «Սլաղաղացով նայուրմորտ», «Սկարչական պարագաներ», «Գավաքով ջուր» ևա), որոնք հատկանշվում են մուգ, խավար ֆոնով, սեղանին դարսված կամ խնամքով խճաբարդակած առարկաների ու պոտուների, ասես, մարմրոյ գուներանգներով: Զնայած նրա աշխատանքներում ամվելոց տարբերակվում ու հարափոխվում են միևնույն մոտիվները, այդուհանեմք դրանք չեն ծանրացնում դիտողին, քանի որ նկարիչն ամեն անգամ նոր, բաքնված գեղեցկություն է հայտնաբերում բնության բարիքների ու կենցաղային սովորական, նույնիսկ հնամաշ առարկաների մեջ՝ վարպետորեն վերարտադրելով հասած մրգերի ու պոտուների հյութեղությունը, փայտաթերերի բնական հյուսքը, կափի թրծվածքը, պղնձի փայլը:

Միայն պայմանականորեն կարելի է «nature morte», այսինքն՝ «անշունչ բնություն» կոչել Շ.Փուշմանի բանաստեղծական բազմանշանակ վերնագորեր կրող, գունատոնային նույր անցումներով հարուստ աշխատանքները՝ «Շավերժական գարնան աստված», «Կյանքի ոսկե մայրամուտը», «Կենաց ակունքը», «Անցյալի ոգին», «Օրիասական վարդի խոստովանանքը» և այլն: Դրանցում պատկերված իրերն ու առարկաները՝ Սերծավոր և Շեռավոր

Արևելքի հնաբույր գեղորները, զարմանալիորեն շնչավորված ու փոխակերպված են Յ.Փուշանի ստեղծագործական երևակայությամբ, վերածված մարդկային մտքեր ու խոհեր, հուշեր և հույզեր, թախանձ ու աղորք արտահայտող, գեղարվեստորեն իմաստավորված խորհրդանշերի:

Կենցաղային իրեր, հաճախ՝ պտուղներ, մրգեր ու բանջարեղեն պատկերող փորադիր նատյուրմորտների հեղինակ է Տրապիզոնում ծնված, ողջ կյանքը թիֆլիսում անցկացրած նկարիչ Յանայակ Շակորյանը (1871-1939): Շագանակագոյն նուգ ֆունի վրա հյուրեղ գոյսներով, լուսաստվերի եռանդուն խաղող ու վրձնի արագ, լայն շարժումներով կատարված այդ աշխատանքները («Սոխեր», «Խաղողներ», «Դեղձեր», «Նոներ» ևն) ետյուդային անվարտ տպավորություն են թողնում և այդ առունով, անշուշտ, գիշում են Զ.Զարայանի երկար մտածված, մինչև վեր հիկված նատյուրմորտներին, թեպետ ավելի քարոշ ու կենսալիր ուժով են օժնված:

Եթերատիվ պանոններ ու հարամկարներ հիշեցնող հորինվածքներ են Մ.Սարյանի՝ հին եգիպտական դիմակներ, պարսկական խայտարենտ գործվածքներ, ջնարակված պանակներ, մրգեր ու դաշտային ծաղիկներ պատկերող նատյուրմորտները («Բանաններ», 1910, «Եգիպտական դիմակներ», 1911, «Պարսկական նատյուրմորտ», 1913, «Դեղին ծաղիկներ», 1914, «Արևելյան մեծ նատյուրմորտ», 1915 ևն), որոնց զրնգուն, հնչեղ գոյսներով արտահայտվել են շրջապատող աշխարհի գեղեցկությամբ խանդակաված բնապաշտ նկարչի լավատեսական ընկալումները:

Նատյուրմորտի ժամրում են աշխատել Գ.Ջոնչոյյանը, Վ.Ախիլյանը, Ա.Պագաւանը, Ն.Ֆրեմկյանը, Յ.Ֆիրիտյանը, թիֆլիսի ինքնուս վարպետ Կ.Գրիգորյանցը: Յայ արվեստագետների միուրյան ցուցահանդեսներում իրենց անդրանիկ ելույթներն են ունեցել տոկավին երիտասարդ հայ նկարիչներ Լ.Ավանազյանը, Գ.Գրիգորյանը, Յ.Կարայանը, Ե.Քոչարը (Քոչարյան):

Ինչպես և նախկինում, տվյալ շրջանի աշխարհիկ նկարչությունը գրեթե բացառապես սահմանափակվել է հաստոցային արվեստի բնագավառով. մոնումենտալ ծևերի ու տեսակների զարգացման համար հայ իրականության մեջ համապատասխան պայմաններ չկային:

Գրաֆիկայի զարգացման գործում մեծ դեր են կատարել գեղանկարիչները: Նշենք Յ.Շամշինյանի և Ա.Շաբանյանի օֆորտները, Կ.Աղամյանի, Մ.Սարյանի, Գ.Յակովլի գրքի գեղարվեստական ծևալիքումները, Ս.Ակայանի, Տ.Տեր-Կարդանյանի, Գ.Միանսարյանի, Գ.Շարբաբյանի՝ ազգային հին և ժողովրդական արվեստով ներշնչված, առանձին դեպքերում ելույթական «մողեռնի» դրոշմը կրող գրաֆիկական ոճավորումները, Պետերբուրգում լույս տեսնող «Արաք» ամսագրի էջերում Գ.Գրիգորիյանի գետեղած գծանկարները և այլն:

Գեղարվեստական բարձրարժեք երևոյթ է Վ.Սուրենյանցի գրաֆիկական ժառանգությունը հիմնականում կապված ռուս ու եվրոպացի, առավելապես ռոմանականին կամ սիմվոլիզմին հարող գրողների Ա.Ս.Պուշկինի, Ս.Ցուլերմոնտովի, Ս.Մետերլինի, Օ.Ուայլի, Ժ.Ռուենբախի, Ս.Լագերլուֆի գրքերի պատկերազարդման հետ: Նկարչը ծևավորել է հայ գրողների ու երաժշտների՝ Ալ.Ծատուրյանի, Ե.Շահագիզի, Ալ.Սպենդիարյանի, Ռ.Սելիբրյանի և այլոց երկերն ու նոտագիր տեսրերը: Նրա ծեռքով գծված պատկերները զարդարել են հայկական հանդեսներից շատերի կազմերն ու էջերը: Այդ ստեղծագործություններում և հայկական հեթիքների մտիվներով կատարված գրաֆիկական թերթերում, բազմաթիվ այլ գծանկարներում ու

ջրաներկ աշխատանքներում Վ.Սուրենյանցը, իր իսկ խոսքերով, ծգտել է «մողեռնացնել ազգային-արևածագական հին հարտարապետության և կերպարվեստի բնորոշ լեզու»:

Յայ նկարիչներից քերն են այդ տարիներին իրենց ամբողջապես նվիրել գրաֆիկական արվեստին: Դրանց թվին են պատկանում արևածագայի փորագրիչ Ե.Շահինը և արևելահայ գծանկարիչ Վ.Խոջաբեկյանը:

Էղգար Շահինը (Շահինյան, 1874-1947) ծնվել է Վիեննայում, մանկությունն ու պատանեկությունն անցկացրել Կ.Պոլտսում, սովորել Վենետիկի Մուլադ-Ռաֆայելյան վարժարանում, ապա հայտնվել Փարիզում, ուր հաճախել է Ո.Ժուլյանի գեղարվեստական ակադեմիան: 1900-10-ական թթ. Ե.Շահինի ստեղծած օֆորտների շարքում մեծ թիվ են կազմում Փարիզի թշվառներին, թափառականներին, կյանքի հատակում հայտնված «փոքր մարդկանց», կրկեսի դերասաններին ներկայացնող աշխատանքները («Մուրացկանը», 1900, «Զործահավաք կինը», 1901, «Գործազրւէկը», 1903, «Հարապարուիկն», 1907, «Գետնախնձոր տապակողները», 1912 ևն): Նկատելի տեղ են գրավում Ե.Շահինի դիմանկարները, որոնցում հանդիպում ենք նրա մշտական մողեռներին Մոնմարտրի բոհեմական միջավայրին ընտելացած թերևարպ գեղեցկուիկներին («Ժորժինա», 1904, «Բիանկա», 1907, «Լիզեր», 1911), ստեղծագործական կյանքով ապրող անվանի մարդկանց՝ ֆրանսիացի գրողների Անատոլ Ֆրանսին (1900), Օկտոպ Միլրոյին (1904), Պոլ Վեռլենին (1925), «Կոմեդի ֆրանսեզ» թատրոնի դերասանուիի Լուիզ Ֆրանսին (1902) և այլոց:

Ե.Շահինին են պատկանում Վերգիլիոսի «Գեորգիկա» խրատական պոեմի, Գ.Ֆլորերի, Գոնկուր եղբայրների, հայ նկարչին անձամբ ծանաչած ու գնահատած վիպասաններ Ա.Ֆրանսի, Ժ.Շյուիսմանսի, Ս.Բառեսի, Գ.Մուրեյի գրական երկերի նկարագրումները:

Նրա ստեղծագործության մեջ կան հայերին պատկերող կամ հայկական թեմաներ շոշափող առանձին թերեր. «Չափոր հայր» (1898), «Սկարչի հոր՝ Պետրոս Շահինի դիմանկարը» (1900), «Տիկին Զարմիկյանը» (1904), «Անի: Յայ որբերը Յովի եկեղեցու մոտ» (1910), «Երիտասարդ հայուիկն» (1911) և այլն:

Գծանկարչության մեջ է իրեն դրսերել Կան (Շովիաննես) Խոջաբեկյանը (1875-1922), որն անցած դարասկզբի թիֆլիսան կենցաղի պատկերահանն էր: Մատիտով և գրչածարյուղ կատարված նրա փորբանի նկարներում անընդհատ կրկնվող մոտիվներից են թիֆլիսի փողոցներում ու մեղաններում ծավալվող բազմարդ տեսարանները՝ ժողովրդական աղմկոտ տոնահանդեսներ, խաղեր ու զվարճանքներ («Ղենուր», «Բարիկենդան», «Խոյերի կոփը», «Ըմբշամարտ», «Աբրուկովիկ»), հարսանեկան, ծննդնդ-կնուճիքի թատրայնացված ծեսեր («Ճարանյաց թափոր», «Ընծաներ հարսին», «Պսակից հետո», «Ճարսի օժիտը հին թիֆլիսում», «Կնունք»), քեֆ ու խնջոյքներ («Քեֆ խոյերի կոփից հետո», «Քեֆ օրբաճալայում», «Թամադայի կենացը», «Քեֆ երգեհոնով», 1919), հոգեհացին ներկա կամ հոգեհացից տուն վերաբերող չքավորների, բազմափորձ թիճա «քելեխչիների» խմբանկարներ («Սեռելոց», «Քելեխս ու տաղողները», «Քելեխից հետո») և այլն:

Աշխատանքներից շատերը Վ.Խոջաբեկյանը կատարել է բոպեների ընթացքում՝ մատիտի կամ գրչի գրեթե մեկ հպումով: Ծանր չլինելով ականական գրաֆիտությանը, նա սահմանափակվել է գրաֆիկական արվեստի ամենապարզ, տարրական միջոցներով, աշխատել շնչության սիլուետային եղանակով միայն եղրագծելով պատկերված մարդկանց ու

կենդանների ֆիգուրները: Սակայն նկարչի ջերմ ժախտը և համակրական, բարի հունորը անսովոր հմայք են հաղործել այդ պատկերներին:

Է.Շահինի և Վ.Խոջաթելյանի հետ ճիշտամանակ հանդես են եկել արևելահայ ու արևմտահայ մի շարք գծանկարիչներ, գրի ձևավորողներ ու փորագրիչներ ևս, որոնց գործերն առայժմ լավ ուսումնասիրված չեն: Նկատի ունենք Յ.Շիվանյանի, Ս.Սողոմոնյանի, Պ.Տեր-Ասատրյանցի, Ս.Գաբրիելյանի, Տ.Փոլայանի, Խ.Բաղիկյանի, Ս.Նահապետյանի, Ս.Շահբազյանի, Վ.Սունոնցի և այլոց գրաֆիկական աշխատանքները: Թիֆլիսում, Կ.Պոլսում, Պետերբուրգում, Կահիրենում, Փարիզում և այլուր հրատարակվող երգիծական ամսագրերում ու զավեշտարերերում («Սիմոն», «Սակրիչ», «Կավորչ», «Խարաբալա», «Զունա», «Սա-դա-նա», «Մոծակ», «Խիճ-բիծ» ևն) տպված ընկերական շարժերի, հումորիստական մանրապատումների, կենցաղային, խրատական-բարոյախոսական, սոցիալական կամ քաղաքական սուր և ներազդող բովանդակություն ունեցող ծաղրանկարների հեղինակներ են Դ.Օքրոյանցը, Վ.Ախիկյանը, Ս.Ակայանը, Ս.Միրզոյանը, Գ.Լևոնյանը, Գ.Երիցյանը, ինչպես նաև Տ.Էքսերյանը, Ս.Յազդյանը, Ա.Շիշմանյանը, Ա.Մինասյանը, Վ.Մանավյանը, Փ.Արփիարյանը, Գ.Միհրարյանը, Յ.Շաքանը (Շաքանյան), հնչակյան կուսակցության գործիչ, Աբենքում և Լոնդոնում 1894-1897թթ. լույս տեսած «Ապտակ» երգիծական-քաղաքական ամսաթերթի խմբագիր Պ.Մարիմյանը, քանդակագործ Ն.Թուրը (Թուրունջյան), դերասան Չ.Լաքբան, գրող և հրապարակախոս Ա.Անտոնյանը և ուրիշներ:

Դայ նոր շրջանի քանդակագործության հիմնադիրներից է Յոռմի Գեղարվեստից ակադեմիայի շրջանավարտ, պղոսահայ վարպետ Երվանդ Ուկանը (1855-1914): Ակադեմիան ավարտելուց հետո նա շուրջ երեք տարի կատարելագործվել է Փարիզում, ապա վերադարձել հայրենիք: Թեև մանկավարժական աշխատանքը նրանից շատ ժամանակ է խլել, այդուհանդերձ, Ե.Ոսկանը գեղարվեստական մեծ ժառանգություն է բողել: Նա ստեղծել է ճարտարապետական տարբեր շինությունների ճակատներն ու ճակտոններն աշխուժացնող դեկորատիվ հարթաքանդակներ, քազմաթիվ մահարձաններ, հնադես է եկել որպես նկարիչ: Բայց Ե.Ոսկանին հիմնականում ճանաչում են բերել բրոնզից ծոլված կամ կապից ծեփված փոքրադիր հորինվածքները («Աղախինը», «Դափնիսը», «Ֆրինեն ծերակույտի առջև», «Ձեյբեկի պարը», «Ձեյբեկի կինը» ևն), պորտրետային աշխատանքները, որոնցից հայտնի են քանդակագործի եղբոր՝ Տիգրան Ոսկանի (1880), ֆրանսիացի հասարակական գործիչ, լրագրող, «Pro Armenia» երկշարաթերթի գլուխուր խմբագիր Պիեռ Կիյառի, կոմպոզիտոր Տիգրան Չուխանյանի կիսանդրիները, բուրք հնագետ և նկարիչ Օսման Յամիլի բեյի ու նրա տիկնոց՝ Նայիլ խանունի հարթաքանդակները (1885) և այլն:

Նոր շրջանի հայ քանդակագործության մեջ շոշափելի է Անդրեաս Տեր-Մարտուրյանը (1871-1919) ներդրումը: Մոնկվայում, ապա Փարիզում ուսումն առնելուց հետո նա եկել է Երևան, սակայն իր ծննդավայրում գեղարվեստական գործունեությանը նպաստող պայմանների բացակայության պատճառով:

Ա.Տեր-Մարտուրյանի ստեղծագործական կարողությունները դրսևովել են գլխավորական դիմաքանդակի ժամրում: 1900-ական թթ. նա կերտել է Ռ.Պատկանյանի (1901), Ս.Նալբանդյանի (1902), Դ.Ալիշանի (1903), Պ.Աղամյանի (1905) և այլոց կիսանդրիները, որոնց հիմնական մասը

պատվերով արված մահարձաններ են: Դրանց իրականացման ընթացքում քանդակագործն օգտվել է լուսանկարներից, ինչն իր որոշակի կնիքը է դրել նրա կիրառած ստեղծագործական մեթոդի, գեղարվեստական ծեռագրի վրա: Ավելի բարեկերպ տպավորություն են թողնում Ա.Տեր-Մարտուրյանի այն աշխատանքները, որոնցում նա ապավինել է ոչ միայն իր տեսողությանը ու վարժված ծերթին, այլև ստեղծագործական երևակայությանը: Խոսքը, մասնավորապես, Պոլինա Վիարդոյի (1906) և Ներսես Թահիյանցի (1903) խարակտերային դիմաքանդակների ու, հատկապես, կարողիկոս Մկրտիչ Խորիմյանի (1905) կիսանդրու մասին է, որն այդ տարիներին գնվել է Փարիզի հայկական համայնքի կողմից և նվիրաբերվել Ա.Էջմիածնին:

1910-ական թթ. Ա.Տեր-Մարտուրյանը գրաղություն գրաղություն է իր «Կյանքի գործիք» խաչատուր Արտօնությանի հուշարձանի հետ կապված աշխատանքներով: Այդ ստեղծագործությանը, որը ներկայում Քանաքեռում է Խ.Արովյանի տուն-թանգարանի առջև, վիճակված էր դաշնալ նոր շրջանի հայ կերպարվեստի մեջ կորուլային առաջին քանդակը:

Նոյն տարիներին է հանդես եկել ծագումով վանեցի Յայկ Բադիկյանը (1876-1950): 1891-ին Բադիկյանների ընտանիքը տեղափոխվել է ԱՄՆ, որտեղ և ապրել ու ստեղծագործել է ապագա քանդակագործը: Նրա արվեստը հասունացել է 1910-20-ական թվականներին: Յ.Բադիկյանի լավագույն աշխատանքներից է Սամ Ֆրանցիսկովի հրապարակներից մեկում դրված Արքահամ Լինրունի հուշարձանը: Ցածր պատվանդանի վրա բազմոցին նստած պետական ականավոր գործիչ կերպարն աչքի է ընկնում վեհատես կեցվածքով, ազդու հայացքի ու վճռականությամբ լի շարժունակությունը կամացին ուժով: Սա վարպետորուն կատարված, պլաստիկական զուսակ միջոցներով լուծված մոնումենտալ հուշակորոնի է:

Յ.Բադիկյանն ստեղծել է հաստոցային բազմաթիվ քանդակներ ու քանդակախմբեր («Անհանգիստ հոգին», 1906, «Չին պատմություն», 1907, «Պայքարողները», «Փղոծություն», «Նմծեցած հողը», «Ունայնություն» ևն): 1915-ին Սամ Ֆրանցիսկովի միջազգային ցուցահանդեսում նրանակ են շահել տեխնիկական առաջնորդացը գովերգող «Գյուտառարություն», «Գորոշու ուժը» և «Ելեկորականության զորությունը» այլարանական հորինվածքները:

Սանր պլաստիկայի ասպարեզում է աշխատել թիֆլիսցի Միքայել Միքայելյանը (1879-1943), որի քանդակները մեծ մասամբ գիպսից կամ բրոնզից ծոլված ժանրային աշխատանքներ են («Ժամանակ Սարանը», 1903, «Դարբին», 1905, «Ասեղ թելող կինը», 1906, «Կումը կոտրած աղջկը», 1907 ևն): Դրանք աչքի են ընկնում կոնպոզիցիոն պայոզ լուծումներով, պատկերված մարդկանց բնական դիրքով, հոգեբանական որոշ խորությամբ, զգացմանընթերով: Այդ հատկանիշներով է օժտված նաև անհայտ կնոջ (ոմանց կարծիքով՝ դերասանության Սիրանույշի) 1909-ին ստեղծված դիմաքանդակը: Դանցի տպավորություն է թողնում մանկան նկեղծ ապրումներով և կենսուրախ տրամադրությամբ համակված «Ծիծաղող աղջկը» (1915):

XX դարի խոշորագույն հայ վարպետներից էր ծննդուռով շուշեցի Դավիթ Գյուղուրյանը (1881-1948): 1898-ին նա մեկնել է Մոսկվա, հաճախել ուսունանական քանդակագործ Պ.Պ.Տրուբեցկովի աշխատանոցը, հետո ուղևորվել Փարիզ և ընդունվել Ռ.Ժուլիանի մասնավոր ակադեմիան: Փարիզում ցուցահանդեսներում Դ.Գյուղուրյանը ներկայացրել է «Անդենի» դեկորատիվ, փոքր ինչ մաներային ոճով կատարված իր առաջին գլուխացքովովովովով «Ղեղ»:

(1912) և «Մեռած Քրիստոսը» (1914), ինչպես նաև երաժիշտ Իսայ Շոբրովկյանի (1913) ու ՀՀ Տոլստոյի (1914) մարմարե կիսարձանները, որոնք աչքի են ընկույտ կերպարների հոգեբանական և հուզական արտասովոր սուր մեկնարանությամբ: Յ.Գյուրջյանը հմտորեն է օգտագործել մարմարի պլաստիկական հատկությունները՝ շնչավորելով ու կենդանացնելով քարի անհաղորդ, իներտ զանգվածը: Այդ շրջանի նրա գործերից ուշագրավ են նաև Մարգարիտ Շիրվանզադեի (1910) և Արշակ Չոպանյանի (1911) դիմաքանդակները:

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն այս Յ.Գյուրջյանը տեղափոխվել է Մոսկվա՝ շարունակելով գրադպել հաստոցային դիմաքանդակով: Նախորդ շրջանի համեմատությամբ, այդ տարիներին առավել շարժուն են դարձել նրա կերտվածքների պլաստիկ ձևերը, փոխվել է ստեղծագործությունների հուզական հնչերանգը՝ հայեցողական ու խորհրդավոր, ներփակ-ներինքնող տրամադրությունների տեղուն են գրավել ռոմանտիկական անհանգիստ, խորվ զգացմունքները: Այդպիսին են Ս.Գորկու (1914), Ֆ.Շայապինի (1915), Ս.Ուսմանինովի (1915), Ա.Ակրյաբինի (1916), Լ. վան Բերիովնի (1919) դիմաքանդակները: 1916-ին Թիֆլիսում են ստեղծվել Ա.Շիրվանզադեի և գորավար Անդրանիկի կիսանդրիները:

Յեղափոխությանը հաջորդած տարիներին արվեստագետն գրադպել է բոլշևիկյան կառավարության ծրագրած աշխատանքներով: Նպատակ էր դրված ոչ միայն «արվեստը դրւու բերել փողոց», այն մասսայականացնել, այլև լուծել գաղափարական խնդիրները: Այդ ծրագրի շրջանակներում Յ.Գյուրջյանը կատարել է ուս հանճարեղ նկարիչ Միհայլ Վորոբեկի հուշարձանի կավե մոդելը (հայտնի է լուսանկարով) և Կարլ Մարքսի վիթխարի 15 մետրանոց հուշակորողի էսքիզները: Սակայն անհրաժեշտ միջոցների ու համապատասխան նյութերի բացակայության պատճառով այդ նախագծերը չեն իրագործվել: 1921-ին Խորհրդային Ռուսաստանի լուսավորության ժողովն Ա.Վ.Լունաչարսկու հատուկ գործությամբ Յ.Գյուրջյանը մեկնել է Փարիզ, որտեղից այլևս չի վերադարձել:

Նրա փարիզյան քանդակներն աչքի են ընկույտ բնահատուկ են ժամանակն բազմազանությամբ և կոնպարհիոն տիպերի առատությամբ. կլոր քանդակներ, հարթաքանդակներ, կիսարձաններ, միաժիգուր ու բազմաֆիգուր հորինվածքներ և այլն: Յ.Գյուրջյանն ազատորեն կիրառում է ինչպես իին արևելյան, անտիկ հունական, միջնադարյան հայ, այնպես էլ եվրոպական դասական ու նոր արվեստի ոճական սկզբունքները: Քանդակների գունավորումը կամ թերևակի երանգավորումը, գրաֆիկական շեշտադրումները, բնական ձևերի աղճատումները, անսավոր շեղումներն ու կրծատումներն արվուն են չափի զգացողությամբ և գեղարվեստական անհրաժեշտ տակտով («Ենյա», 1922, «Դադանակ», 1923, «Սալոմե», 1926, «Գերոգի Յակուլով», 1927, «Տեգուիլու գլուխ», 1929, «Միամի կատու», 1932, «Դենրիետա Պասկար», 1933, «Գարեգին Շովենիյանի դիմաքանդակը», 1935 ևն):

XIX դարի վերջին քառորդում և XX դարի առաջին երկու տասնամյակներում գործած արևելահայ և արևմտահայ այլ քանդակագործների՝ Ֆ. և Վ.Երակյան Եղբայրների, Յ.Արայանի, Խ.Կյուլսասյանի, Ա.Ամպարանյանի, Տ.Կմիշյանի, Ա.Գոլանյանի, Յ.Բենդերյանի, Գ.Գափամաճյանի, Զ.Բեյությանի, Ա.Թաշճյանի, Ա.Արդությանի, հայ անվանի գորդ Մուրացանի դրամատ Ռուզան Մուրացանի և այլոց մասին:

Եղած տեղեկությունները սակավարի են: Ինչ վերաբերում է այդ տարիներին իրենց ստեղծագործական ուղին սկսած Յ.Փափազյանին, Ս.Մերկուրովին, Մ.Սարգիսին (Սարգյան), Վ.Մելիք-Շակորյանին, Գ.Կեահնովին (Քեահնյան) կամ Ն.Թուրիին (Թուրունյան), ապա նրանց արվեստը վերելք է ապրել հաջորդ շրջանում՝ Խորհրդային Հայաստանի կամ սփյուռքահայ գեղարվեստական իրականության մեջ:

\*\*\*

1918-ի մայիսի 28-ին հոչակված Հայաստանի Առաջին Հանրապետությունը կարծատ պատմություն ունեցավ: Ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում հայտնված նորաստեղծ երկրի ղեկավարությունը հիմնականում մտահոգված էր պետական անվտանգության ապահովման և ժողովրդի կենսական կարիքների բավարարման հրատապ խնդիրներով: Ուստի նշակույթի հարցերը հաճախ հետաձգվում կամ արմատական լուծում չին ստանում:

1919-ի մայիսի 25-ին՝ հանրապետության տարելիցի առիվ, Երևանի նոր գիմնազիայի շենքում (հետագայում Խ.Աբրյանի անվան դպրոց) բացվեց Հայ արվեստագետների միության երրորդ ցուցահանդեսը: Հաջորդ օրը Նախարարների խորհրդում լսվեց լուսավորության և արվեստի նախարար Ն.Աղբայանի «Հայ ազատագործության հերոսների հիշատակին հուշարձան կառուցելու մասին» գեկուցումը: Որոշում ընդունվեց հուշարձանը կանգնեցնել Երևանում պետության հատկացրած և ժողովրդական հանգանակությամբ հավաքված գումարներով: Մրցանակաբաշխության մասին հայտարարություն տպվեց մանուլում:

Հայաստանի Առաջին Հանրապետության տարելիցը մեծ շուրջով նշվեց Երևանում: Քաղաքի գեղարվեստական ծևավորման աշխատանքները ղեկավարում էր ճարտարապետ Ալ.Թամանյանը: Փողոցները և հրապարակները զարդարվեցին գունագույն դրոշներով ու ժապավեններով, ժաղկեփնջերով ու ծաղկաշղթաներով, գորգերով ու պատառներով:

1919-ի օգոստոսի 21-ին հիմնադրվեց Հնությունների պահպանության պետական կոմիտեն (նախագահ՝ Ալ.Թամանյան), որն անմիջապես ծրագրեց ցուցակագրել, չափագրել, նկարագրել և լուսանկարել Հայաստանի հին հուշարձանները, պատճենահանել որմաններմերն ու հարթաքանդակները, ստեղծել Յայաստանի հնագիտական լիարժեք քարտեզը: Ծրագրին իրականացնող աշխատանքային խճի մեջ ընդգրկվեցին նկարիչներ Ե.Թաղևոյանը, Յ.Կոջոյանը, Գ.Կովսեփյանը, Ա.Տեշոյանը, Ս.Մարգարյանը, Ս.Թարյանը (Թարխարայան), ճարտարապետներ Շ.Թորամանյանը և Գ.Տեր-Միքելյանը, արվեստաբան Գ.Լևոնյանը: 1920-ի հուլիս-սեպտեմբեր ամիսներին Թ.Թորամանյանի ղեկավարած արշավախումբն ուսումնասիրություններ կատարեց Յայաստանի տարբեր վայրերում: Ննանահանվեցին Անի Եկեղեցիներում պահպանված որմաններուն:

1929-ի սեպտեմբերին Երևանում հիմնադրվեց Ազգային քանդական՝ ազգագործետ-հնահավաք Ե.Լալայանի տնօրինությանը: Թանգարանի գեղարվեստական բաժնի վարիչ նշանակվեց նկարիչ Վ.Ախիլյանը: Հայ արվեստագետների միության ցուցահանդեսից գնված ստեղծագործություններից բաժինը հանալով լսվեց լուսավորության գումարներու մասին գործությունը: Այս գործությունը պահպանված աշխատանքային խճի մեջ ընդգրկվեցին նկարիչներ Ե.Թաղևոյանը, Յ.Կոջոյանը, Ա.Տեշոյանը, Ս.Մարգարյանը, Ս.Թարյանը (Թարխարայան), ճարտարապետներ Շ.Թորամանյանը և Գ.Տեր-Միքելյանը, արվեստաբան Գ.Լևոնյանը: 1920-ի հուլիս-սեպտեմբեր ամիսներին Թ.Թորամանյանի ղեկավարած արշավախումբն ուսումնասիրություններ կատարեց Յայաստանի տարբեր վայրերում: Ննանահանվեցին Անի Եկեղեցիներում պահպանված որմաններուն:

Ստեղծվեցին Յայաստանի Առաջին Հանրապետության դրույշը կինանշանը, դրանմանիշերն ու նամականիշերը: Ծիածանի երեք հիմնական կարմիր, կապույտ և դեղին գույներից կազմված դրույշը նախանկարուածարկել է Ս.Մարյանը, գինանշանը նախագծել են Դակոր Կողոյանը (1883-1959) և Ալեքսանդր Թամանյանը (1878-1936): Ազգային առաջին թրադարաններն ու նամականիշերը ձևավորել են Հ.Կողոյանն ու Շ.Ֆերվաճյանը:

Այդ տարիների նկարչական հիշարժան գործերից է Յ.Կոջոյանի «Անիի ավերակները» (1919) փոքրաչափ գուաշը: *Սեղակ Առաքելյանի (1884-1942)* լավագույն էսյուներից է գունային անսովոր թարմությամբ օժտված «Ցորեն են չորացնում» (1920) յուղանկարը:

ԲԱԺԻՆ 11

ԽՈՐՃՐԱՎՅԻՆ ԴԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐՎԵՍԸ (1920-1991 թ.)

Ասենախոսության այս բաժինը բաղկացած է երեք գլուխներից. ԳԼՈՒԽ Ա. 1920-1932 թթ. Կերպարվեստը, ԳԼՈՒԽ Բ. 1930-1950-ական թթ. Կերպարվեստը և ԳԼՈՒԽ Գ. 1960-1980-ական թթ. Կերպարվեստը. Դրանցից յուրաքանչյուրը որոշված է չորս Ենթագլուխների (քսա Կերպարվեստի առանձին տեսակների՝ գեղանկարչություն, թեմանկարչություն, գրաֆիկա և քանդակագործություն): Համին վերջին գլուխը, Ենթագլուխներից բացի, ընդգրկում է նաև յոթ պարագրաֆներ, որոնք նվիրված են գեղանկարչության, գրաֆիկայի և օճանդակագործության զանազան՝ մոնումենտալ, դեկորատիվ, հասողացային և լիրական ձևերին:

1920-ի Ապելմբերի 29-ին Հայաստանում հաստատվեց Խորհրդային Խշխանությունը՝ սկսվեց հայ ժողովրդի նորագոյն պատմության սկզբը:

Խորհրդային Հայաստանում անհրաժեշտ պայմաններ ստեղծվեցին Եղանգում կտրուկ տեղաշարժերի համար: Դա սրբազնագույն սակավաթիվ շարժերը հարածող տեմպով հաճախ կատարվեցին 1922-ից Երևանում գործող Գեղարվեստա-տեխնիկական դպրոցի (1926-ից՝ Եղանգում առաջուն արդյունաբերական կամ Գեղարվ տեխնիկում, 1938-ից՝ Թերլեմենային անվան գեղարվեստական ուսումնարան), ապա 1945-ին ացված Երևանի գեղարվեստական հնատիտուտի (1953-ից՝ Գեղարվեստա-առերարական ինստիտուտ, 1994-ից՝ Պետական գեղարվեստական ինստիտուտ, 000-ից՝ Գեղարվեստի պետական ակադեմիա) շրջանավարտներով: Ազգային սրբազն զարգացավ ու ճյուղավորվեց, զգայիրեն բարձրացավ ու արևորվեց նրա ները հասարակության մեջ: Դանարակնությունում իմնադրվեցին ստեղծագործական միուրյուններ, ընկերություններ, անգարաններ, պատկերասրահներ, գեղարվեստական խմբաններ, ակումբներ, ասմագիտացված դպրոցներ, թերթեր, հանդեսներ, ազգային արվեստի և սումնասիրության գրադպու գիտական հաստատություններ և այլն: Եթերում ավալված ու տարեց-տարի նոր քափ առնող շինարարական գործունեությունը քանի կերպարվեստի ոչ հաստոցային՝ ճարտարապետության և աղաքաշինության հետ կապված մոնումենտալ-դեկորատիվ ձևերի արգացումը:

Սակայն ակնհայտ նվազումների կողքին խորհրդային շրջանի հայ երպարվեստում տեղ գտան նաև նեգատիվ երևույթներ, որոնք ծայրահեռ

դրսեռորմներ ստացան 1930-40-ական թթ.: Բոլշևիկյան իշխանության ձեռքում արվեստը դարձավ զաղափարական գենք, հասարակական գիտակցությունը «ճիշտ կողմնորոշելու» ազդեցիկ միջոց: Ազգային գեղարվեստական ծշակույթն անդառնալի կորուստներ կրեց. քաղաքական բռնությունների զոհ դարձան ճարտարապետներ Մ.Մազմանյանը, Ն.Բունիածյանը, Ըկարիչներից ու քանդակագործներից՝ Ս.Ռովհաննիսյանը, Ե.Գարուսյանը (Դանչը), Տ.Խաչվանքյանը, Ե.Քոչարը, Տ.Դավթյանը և ուրիշներ: Յայաստանի պետական պատկերասրահից Վերցրեցին ու ոչնչացրեցին «զաղափարապես արտասվոր» ճամաչված ստեղծագործությունները, «ժողովրդի թշնամի» կոչված անվանի մարդկանց դիմանակարներն ու դիմաքանդակները: Արվեստի բնագավառում կուսակցական հսկողությունը սաստկացնելու և «ֆորմալիզմի բոլոր արտահայտությունների դեմ անհաշտ պայքար մղելու» մասին միութենական ու հանրապետական կնուսուների որոշումներից հետո արվեստագետներից ոնանք հայտնվեցին պաշտոնական քննադատության մաճլիշների տակ:

Խորհրդային շրջանում Երևանը դառնում է հայ ժողովրդի մշակութային կենտրոնը: 1920-ական թթ. Ռուսաստանից, Վրաստանից, Սիցիլիայից, արտասահմանյան տարրեր Երկրներից Հայաստան են գալիս ինչպես անվանի վարպետներ Ս.Աղաջանյանը, Փ.Թերլեմեզյանը, Գ.Լևոնյանը, Տարագրոսը (Տ.Տեր-Կարդանյան), Գ.Գյափենյանը, Մ.Սարյանը, Գ.Շովեմիանը, Յ.Կովհաննիսյանը, այնպես էլ Երիտասարդ Ըկարիչներ և քանդակագործներ Ա.Բարյանը, Դ.Թաղենոյանը, Գ.Գյուրջյանը, Ս.Ստեփանյանը, Գ.Նալբարյանը, Ս.Արուտչյանը, Ա.Ուրարտուն, Գ.Ֆերմանյանը, Ս.Թաղյանը, Ա.Սարգսյանը և ուրիշներ: Հանրապետությունում մինչ այդ բնակվող Ե.Նազարյանի, Վ.Ախիլյանի, Վ.Մելիք-Շակորյանի, Ս.Առաքելյանի, Գ.Բրուտյանի, Ս.Սագինյանի, Տ.Խաչվանյանի և այլոց հետ նրանք նպաստում են հայ կերպարվեստի հետագա զարգացմանը: Խորհրդային Հայաստանի գեղարվեստական կյանքին մասնակցում են նաև թիֆլիսարքնակ Գ.Բաշինջանյանը, Ս.Սիրոյանը, Ե.Թաղենոյանը, Ս.Խունունցը, Գ.Շարբարյանը, Ս.Կիրակոսյանը, Գ.Գրիգորյանը, Դ.Կարայանը, Վերացական արվեստով տարված Ս.Սարգարյանը և ուրիշներ, որոնք 1921-ին ընդգրկվում են հայ արվեստագետների ստեղծագործական միությունների ընդհանուր ժողովի որոշմանը Թիֆլիսում հիմնադրված Հայարտան (Հայ արվեստի տան) կերպարվեստի մասնաճյուղի մեջ:

1922-ի նոյեմբերին Երևանում բացվում է Հայաստանի պետական թանգարանը, որի գեղարվեստական բաժինը 1935-ին վերածվում է Կերպարվեստի թանգարանի, 1947-ից կոչվում Հայաստանի պետական պատկերասրահ, իսկ 1991-ից՝ Հայաստանի ազգային պատկերասրահ: 1923-ին ստեղծվում է Հայաստանի Կերպարվեստի աշխատողների ընկերությունը (նախագահ՝ Ալ.Թամանյան, տեղակալ՝ Ս.Սարյան), որն ընդգրկում է հայրենիքում ապրող ճարտարապետներին, նկարիչներին ու օրանիականողներին:

1920-ական թթ. կեսերից հաճապետության մշակութային կյանքում նետզինտես սրվող գաղափարական պայքարն արտացոլվում է Երևանում լուս լուսնոյ «Արվեստ» հանդեսի և «Արվեստի ֆրոնտում» երկշաբարաքերթի շերտում: Իրավիճակն էլ ավելի է սրվում, երբ 1927-ի հունվարին Շեղափոխական Ռուսաստանի նկարիչների միավորումը որոշում է Բայաստանում ստեղծել գեղարվեստական այդ կազմակերպության հասնայութը: Շեղափոխության նկարիչների հայկական միավորնան հիմնադրի

անդամներն էին Կերպարվեստի աշխատողների ընկերության կազմից դուրս եկած արվեստագետներ Գ.Գյուղյանը, Ա.Սարգսյանը, Մ.Արուտչյանը, Վ.Գայֆեճյանը, Ա.Ռւբարտուն և Ս.Թարյանը, որոնք կոչ էին անում առաջնական ակտիվացնել, ներգործուն դարձնել արվեստի դեր հասարակության մեջ, սերտորեն կապվել շրջապատող կյանքի և վերափոխվող հրականության հետ: 1928-32 թթ. Երևանուն, Լենինականուն, Վաղարշապատուն, Աշտարակուն և այլուր կազմակերպվուն են միավորման շրջկ ցուցահանդեսները:

Մինչև 1932 թ. խորհրդային արվեստու զարգանում է գաղափարական և գեղարվեստական խիստ, քայլ հանդուրժող պայմաններում: Իրադրությունը կտրուկ փոխվում է 1932-ի ապրիլի 23-ին Դամկ(ր)կ կենտկոմի ընդունած «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» հայտնի որոշումից հետո: Արձակվում են ստեղծագործական բոլոր ընկերությունները, որոնք փոխարինվում են խորհրդային գրողների և արվեստագետների հանապարփակ միություններով: Սկիզբ է դրվում «սոցիալիստական ռեալիզմ»<sup>2</sup> մեջիշխանությանը:

Ինչպես և մինչխորհրդային շրջանուն, առաջատար դիրք է գրավում գեղանկարչությունը: Այստեղ ծեռք բերված հաջողությունները հիմնականուն կապված են ավագ սերնդի ներկայացուցիչներ Ս.Սղաջանյանի, Փ.Թերլեմեզյանի, Ե.Թադևոսյանի, Վ.Գայֆեճյանի, Ա.Սարյանի, Դ.Կոջոյանի, Ս.Առաքելյանի և այլոց կոտավուների հետ:

Ե.Թադևոսյանի ստեղծագործական հետաքրքրությունների կենտրոնում է մոնու բնանկարը, առավել հայտնի գործերից են «Մեր փողոցը Վաղարշապատում» (1921), հիշողությամբ արված յուղանկարն ու բնությունից ստացած թարմ տպավորություններն արտացոլող բազմերանգ էտյունները («Տեսարան Դաղպատից», 1927, «Արարատը Վաղարշապատից», 1930, «Սևանա կղզին», 1934 ևն): Նախորդ շրջանի համեմատ, Ե.Թադևոսյանի արվեստուն արդ կարևորվում է դիմանկարը՝ «Դովհաննես Թումանյան» (1933), «Ինքնանկար» (1933) և այլն: Խորհրդային շրջանուն նրա ստեղծած գլուխօրոշոցն է «Կոմիտասը» (1936), որտեղ բնության գրկում վանականի ճերմակ կապայով պատկերված երգահանի կերպարն ընկալվում է իրեն հայ ժողովրդի ստեղծարար ոգու մարմնացում: Նկարը լուծված է երաժշտական գուգորդումներ արթացնող գումային նուրբ փոխանցումներով:

Ս.Սղաջանյանի դիմանկարների հերոսները հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ են՝ խնամագուրկ տղայից ու շարքային դրանապանից մինչև արվեստի անվանի գործիչները («Քեռի Սեղակ», 1926, «Վասիլ», 1926, «Անապատանը», 1928, «Կոմպոզիտոր Ա.Տեր-Դևոնյան», 1928, «Երգչուի Ե.Բարոնիկինա», 1935 ևն): Ռեալիստական լիարյուն ձևերով, հոգեանական դիպուկ շեշտերով են բնութագրվում Ս.Սղաջանյանի 1925-26 թթ. ինքնանկարները:

Կենցաղային մանրամասներով համեմված, գումային նրբերանգմերով հարուստ իր կոտավուն հայրենի բնաշխարի համեստ, անպատճյ գեղեցկությունն է վերաստեղծում Ս.Առաքելյանը («Աշնանը այգում», 1923, «Մընչաղ», 1924, «Մայրամուտ: Սևան», «Աշնանային բնանկար», 1934 ևն):

<sup>2</sup> Խորհրդային գեղարվեստական հականության մեջ այս հասկացությունն առաջին անգամ գործածվել է 1932-ին, իսկ որպես ստեղծագործական մեթոդ և գաղափարական սկզբունք պատճենական հոչակվել 1934-ին:

Ժամանակի պահանջով և «հասարակական պատվերի» թելադրանքով նկարիչը վրձնել է նաև իր ստեղծագործական խառնվածքին խորթ, քարոզչական նպատակներ հետապնդող թեմատիկ պատկերներ՝ «Կուլակները հարթեցնում են չքավորներին» (1930), «Կորչի չաղրան» (1931), «Կուլտուրան դեպի լեռները» (1936) և այլն, իսկ Դայրենական Մեծ պատերազմի տարիներին՝ «Պարտիզանների հարձակումը» (1941) և «Ֆաշիստական փոխարականիցոնների ոչնչացումը» (1942) մարտանկարներն ու «բրիգադային մերորդը» (Դ.Զարդարյանի և Ս.Շիրատուրյանի հետ համատեղ) կատարված «Լենինգրադի պաշտպանության համար», «Բալթիկ ծովի նավատորմը», «Կովկասի մատուցյներում» մեծադիր կոտավուները:

Փ.Թերլեմեզյանն առաջիններից էր, ով դիմեց վերակառուցվող հանրապետության շինարարական հրապարակների և արդյունաբերական օբյեկտների պատկերմանը: Աշխատանքային առօրյա եռուցեած գրեթե վավերագրական ծշտությամբ գրանցող նրա գործերից են «Ղափանի պղնձածովարանը» (1929), «Զորագետը» (1930), «Երկարուղային կամուրջի կառուցումը» (1933) և այլն: Առավել հաջողված են նկարչի՝ Դայաստանի տարբեր վայրերում, օրվա տարբեր ժամերին վրձնած բնության մաքուր տեսարանները («Զմեռային օր», 1933, «Սևանա կղզու ափը», 1936, «Արարատը առավելույան», 1938 ևն):

Դիմանկանում բնանկարի ժամորում է աշխատել Վահրամ Գայֆեճյանը (1879-1960), որի փոքրածավալ կոտավուները բնորոշվում են գումային վառ, դեկորատիվ ընկալումներով, կատարողական ազատ, արտիստիկ ոճով՝ «Զմեռը Երևանում» (1927), «Արևոտ օր» (1930), «Նորքի տեսարան» (1938), «Գարնանային էտյուդ» (1940) և այլն:

Դ.Կոջոյանի երինակներից հայտնի են գումագծային էքսպրեսիվ եղանակով 1922-ին Պարսկաստանում կատարված «Թավլիզի շները», «Փողոց թավլիզում» և «ճաշարան թավլիզում» տեմպերաները: Դ.Կոջոյանը գարնանային և աշնանային բազմաթիվ աելզամների հեղինակ է: Նրա կորողային աշխատանքը «Կոմունիստների գնդակահարումը Տարևուն» (1930) թեմատիկ պատկերն է, որտեղ գաղափարական թշնամների դաշնակների և կոմունիստների խոշոր ալբանով ներկայացված ու ակնհայտորեն հակարգված կերպարներն արտահայտում են պատճենական պահի ողջ դրամատիզմը:

Դայրենի բնության հավաքական կերպարը տվյու բնանկարներ, արյունաբերական ու շինարարական տեսարաններ, ինչ ու նոր գյուղի կյանքն ու կենցաղը պատկերող ռեալիստական կոտավուն է ստեղծել Գարիբել Գյուղյանը (1892-1987), որի բնորոշ գործերից են «Չո-Չո գյուղը» (1926), «Ճետամնաց Սպարանը» (1929), «Ծիրջարանցքի ամբարտակի կառուցումը» (1929), «Սևան: Զանգչինը» (1937) «Այրիվանքի բլուրները» (1940) և այլն: Պատերազմի տարիներին է կատարվել «Ֆաշիստական ռազմանավերի խորտակումը» (1942) մեծաշահ մարտանկարը:

1920-ական թթ. սկզբին Ս.Սարյանի կերտած աշխատանքներից տպավորիչ է դեկորատիվ ու մոնումենտալ կերպավորում գտած «Դայաստան» (1923) պանոն, որի հիման վրա նոյն թվականին նկարիչը ստեղծել է Դայաստանի Առաջին պետական թատրոնի վարագույրը: 1926-28 թթ. Փարիզ կատարած ուղևորությունից հետո Սարյանի բնանկարները հարստանում են լուսաբահնցիկ կիսատոներով՝ «Երևանյան բակը զարնան» (1928), «Ծաղկած ծիրանիներ» (1929), «Աշնանային լույս» (1930) և այլն: Բազմաթիվ դիմանկարների շարքում առանձնանում են Ե.Զարենցի (1923), Ավ.Խսահակյանի

(1940), Յ.Օրբելու (1943), Ա.Խաչատրյանի (1944) դիմանկարներն ու վարպետի հնքնանկարները: Սարյանի արվեստին ներհատուկ բնապաշտական կենսարեր ուժը դրսերպում է նկարչի բուսական նատյուրմորտներում, որոնցից առավել հայտնի է Հայրենական Մեծ պատերազմին մասնակից հայ գինվորներին նվիրված «Ծաղիկներ» (1945) մեծադիր կտավը:

Սարյանական արվեստից սերող մոնումենտալ-դեկորատիվ ուղղությունը շարունակվում է Մ.Աբեղյանի, Մ.Ավանայանի, Յ.Չարդարյանի և այլոց աշխատանքներում: «Սարյանական դպրոցից» դուրս, դրան գուգահեր են ընթանում Դ.Նալբանդյանի, Ե.Խարենյանի, Մ.Ռաշմանյանի, Խ.Խայանի, Բ.Քոլոյանի, Ե.Սավյանի, Ց.Աղիզյանի, Ա.Նալբանդյանի և այլոց ստեղծագործական որոնումները:

Թեմատիկ պատկերի, մասնավորապես, պատմանկարի և ճարտարակարի զարգացման են նպաստել «Սասունի Դավիթ» էպոսի 1000-ամյա հորեանի կապակցությամբ 1939-ին հայտարարված գեղարվեստական նրգույթները և Հայրենական Մեծ պատերազմի տարիներին տիրող բարոյական մթնոլորտը, որոնք օրվա հրատապ խմելի են դարձել պատմական հեռավոր ու մոտ անցյալում տեղի ունեցած՝ նոր սերնդին ոգեանդող, օրինակ ծառայող հերոսամարտերի արդիական ընկալումը: Ստեղծվում են Կ.Սիմոնյանի «Յուսուփի սպանությունը» (1939), Ս.Գալստյանի «Դավիթը դիմում է Մըսրա Մելիքի գործերին» (1939), Ե.Ասրդյանի «Բագրեվանի ճակատամարտը» (1939), Ե.Խարենյանի «Դավիթ Բեկը» (1945), Դ.Նալբանդյանի «Գնդապետ Սիմոն Զաքյանի վերջին հրամանը» (1942), Վ.Աղարայյանի «Ստալինգրադի հաղթանակը» (1943), Մ.Ավանայանի «Դերոսի վերադարձը» (1943) և այլն:

Այդ շրջանի հայ կերպարվեստում որոշակի տեղ են գրավում Թիֆլիսում ապրած մի խումբ վարպետներ: Կինը և կնոջ զգայական գեղեցկությունը՝ «Երկրային սերն» և մշտապես սնել Ալեքսանդր Բաժեռուկ-Սելիքյանի (1891-1966) ստեղծագործական երևակայությունը, անդիմադրելի հմայք հաղորդել նրա փոքրադիր կտավներին՝ «Լողացող կանայք» (1928), «Դրիմի բարարությունը պարը» (1936), «Զենանու կանայք» (1943) և այլն: Նույնական փայլու են կատարված նաև նկարչի պորտրետային աշխատանքները. Նազելի Տերյանի (1929), Լենա Զանիսի (1930), Լիդայի (1942), նկարչի դուստրեր Լավինիայի ու Զուլեյկայի՝ բատերային-ռոմանտիկական կերպավորում ստացած դիմանկարները:

Դումորով շնչող ժամբարյան հետահայաց տեսարաններ են Յովսեփ Կարայանի (1897-1981) աշխատանքները, որոնցում գեղարվեստական պարզունակ ոճով վերարտադրված է հին Թիֆլիսի ավանդական միջավայրը («Դնաֆ շուկա», 1927, «Շնձան», 1948, «Կերուխում», 1950 ևն):

Ամրապինդ ու կոչու գծանկարով, մթին տոների զաված ուժով, պլաստիկական կտրուկ շեշտերով նոնումնենտալ առնագեղ տպավորություն են բողոնում Գևորգ Գրիգորյանի (Զոտոս, 1897-1976) հաստոցային գործերը՝ Ստ.Շահումյանի (1926), Ե.Զարենցի (1927), Դիանայի (1944) դիմանկարները, բեմատիկ պատկերները («Առաջնորդի մահը», 1927, «Դերոսի մահը», 1929), առարկայական ու բուսական նատյուրմորտները («Նատյուրմորտ սկահակով», 1928, «Նատյուրմորտ ծխամործով», 1931, «Նատյուրմորտ սխտորով», 1942):

Թիֆլիսում է ծնվել և որպես նկարչ ծևավորվել Երվանդ Քոչարը (Քոչարյան, 1899-1979): Իր ստեղծագործության փարիզյան շրջանում (1923-36 թթ.) նա ինքնատիպ փորձեր է արել «տարածական նկարչության» մեջ ու ծեռք բերել նորարարի համբավ: Հայաստանում նրա կատարած յուղաներկ

մոմաներկ առաջին, ըստ որում առավել ցայտուն աշխատանքներից է գումարված էքսպրեսիվ ծերով լուծված «Ինքնանկարը» (1936):

Երկար ժամանակ Թիֆլիսում է ապրել 1970-ին Երևան տեղափոխված Պակրչան Ղարիբջանյանը (1902-1987), որից մեզ հասած սակավարիվ կտավները («Վիրահատություն», 1928, «Կարբիդի գործարանում», 1933, «Աղջկը, մանյակը և հայելին», 1943) ուղղություն են գրավում ոչ միայն հստակ գծանկարով ու կոպազդիցին հավաք դասավորությամբ, այլև խստորեն ջոկված սև, ծերմակ, դեղին, կանաչ գույների, մուգ օքրաների գուսա, ճաշակավոր հարաբերությամբ:

1920-ական թթ. պրոֆեսիոնալ հիմքերի վրա է դրվում հայկական բեմանկարչությունը: Նախկինում տիրող նկարչագեղ-նմանահանող մերողն աստիճանաբար փոխարինվում է բեմի տարածքը, ողջ բեմատուիչը կազմակերպող, ներկայացման արտաքին կերպը, տեմպը և ռիթմը հատկանշող ճարտարապետական-կոնստրուկտիվ եղանակով, որին այս կամ այն չափով հետևել են Մ.Արուտյանը, Ս.Թարյանը, Ս.Մազմանյանը, Ս.Սայսյանը, Ա.Ալաջալովը (Ալաջայան) և ուրիշներ: Յայ բեմանկարչության մեջ կոնստրուկտիվիզմի տարածման գործում բացառիկ դեր է կատարել 1926-27 թթ. Երևանի Առաջին պետական թատրոնում (1937-ից՝ Գ.Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոն) ռեժիսոր Ա.Բուրջայյանի բեմադրած՝ Վ.Շերսպիրի «Կենետիկի վաճառականը» և Ալ.Շիրվանզադեի «Մորգանի խնամին» ներկայացումների ծևակորման հեղինակ, Սոսկվայից ժամանած Գեորգի Յակովլյանը (Գևորգ Յակովյան, 1884-1928):

Գեղարվեստական տեսակետից անբերի են 1939-ին Երևանի Օպերայի և բալետի պետական թատրոնի հանճար Ս.Սայսյանի կատարած՝ Ալ.Աբենդիարյանի «Ալմաստ» օպերայի դեկորների ու տարածման սարքագիները, որոնց վրա նկարիչն աշխատել է պատասխանաւուվության մեջ զգացումնով, քանի որ երաժշտական այս բեմադրությամբ է Մոսկվայում բացվել Յայ գրականության և արվեստի տասնօրյակը: Մոնումենտայ վեհ տպավորություն է թողոնում «Ալմաստ» առաջին գործողության համար Սայսյանի բընճած լեռնային բնանկարը՝ խրոստ տաճարներով, որ հիշեցնում են Անիի և Գեղարդի ճարտարապետական հուշարձանների ծանոթ ծևերը: Բեմական զգեստներում շեշտված են դեկորատիվ-օրնամենտալ տարրերը՝ ժողովրդական արվեստին բնորոշ հնչեղ գույները և նրանակությունը գժանախշերը:

Եվլոպական դասական կատակերգության ծևակորումներում է լիովին բացահայտվել Մելիքսեք Սկախյանի (1916-1946) բեմանկարչական վառ և ինքնատիկ տաղանձը: Լեճինականի Ա.Մռավյանի անվան պետական թատրոնում (1990-ից՝ Վ.Անենյանի անվան դրամատիկական թատրոն) Երևանի հայոց գործում պատկանում է Ժ.Բ.Մոլիերի «Երևակայական հիվանդ» (1942), Վ.Գոլդբերի «Կենետիկյան երկվորյակներ» (1943) և Վ.Շերսպիրի «Տամերկությունը գիշեր» (1944) պիեսների ու դեկորներն ու բեմական հանդերձները:

1930-ական թթ. կեներից և, հատկապես, 1940-ական թթ. հայ բեմանկարչության մեջ հաստատվել են լուսաբանող-նկարագրական պասսիվ մոտեցումները: Կատարված փոփոխությունների վկայությունն էր 1940-ին Երևանում բացված հայ բեմանկարչների առաջին ցուցահանդեսը:

Դրամատիկական ու երաժշտական թատրոններում որպես նկարիչներ հանդես են եկել Ա.Դանդուրյանը, Կ.Մինասյանը, Ա.Ավանեսյանը, Զ.Սիմոնյանը, Խ.Խայանը, Ա.Չիլինգարյանը, Վ.Վարդանյանը, Պ.Անանյանը, Ս.Ա.Արուտյանը,

